

## Փաշինեանը Նամակ Յղեց Փութինին՝ Անյապաղ Սկսիլ Խորհրդակցութիւններ՝ Հայաստանին Աջակցելու Նպատակով

Վարչապետ Նիկոլ Փաշինեան Շաբաթ օր, նամակ յղած է Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութինին անյապաղ խորհրդակցութիւններ սկսելու՝ սահմանելու աջակցութեան տեսակները եւ չափը, որ Ռուսաստան կրնայ յատկացնել Հայաստանին: Այս տեղեկութիւնը տարածեց Հայաստանի Արտաքին Գործոց նախարարութիւնը առաւօտեան տարածած հաղորդագրութեամբ:

«Նամակում, մասնաւորապէս, ընդգծուել է Մերձաւոր Արեւելքից օտարերկրեացի զինեալ ահաբեկիչների տեղափոխման եւ վերջիններիս Լեւոնային Ղարաբաղի դէմ մարտական գործողութիւններում ներգրաւման հանգամանքը: Հաշուի առնելով մարտական գործողութիւնների Հանրապետութեան սահմանին մօտենալու, ՀՀ տարածքի նկատմամբ արդէն իսկ տեղի ունեցած ոտնձգութիւնների փաստերը: ՀՀ վարչապետը դիմել է ՌԴ նախագահին սկսելու անյապաղ խորհրդակցութիւններ՝ սահմանելու աջակցութեան տեսակները եւ չափը, որը Ռուսաստանի Դաշնութիւնը կարող է յատկացնել Հայաստանի Հանրապետութեանը՝ իր անվտանգութեան ապահովման համար՝ հիմք ընդունելով Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ դաշնակցային յարաբերութիւնները եւ 1997թ. Օգոստոսի 29-ի «Բարեկամութեան, Համագործակցութեան եւ փոխադարձ աջակցութեան մասին» պայմանագրի 2-րդ յօդուածը»,- ըստած է Արտաքին Գործոց նախարարութեան հաղորդագրութեան մէջ:

Վարչապետի նամակի վերաբերելով Հայաստանի Արտաքին Գործոց նախարարութեան հաղորդագրութեան էտք, Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչութիւնը հանդէս եկած է յայտարարութեամբ՝ որուն մէջ ըստած է. «Ռուսաստանը, դաշնակցային պայմանաւորութիւնների համաձայն, անհրաժեշտ ողջ աջակցութիւնը կը ցուցաբերի, եթէ ռազմական գործողութիւնները տեղափոխուեն անմիջապէս Հայաստանի տարածք»:

Ռուսաստանի Արտաքին Գործոց նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան իր կարգին յայտնած է որ, հայ-ռուսական վերոյիշեալ պայմանագիրը յստակ գործողութիւններ կ'ենթադրեն, եթէ յարձակումի սպառնալիք յառաջանայ երկու պետութիւններէն որեւէ մէկու համար, կամ եթէ Հայաստանն ու Ռուսաստանը յարձակման ենթարկուին:

## Ատրպէյճանի Բանակը Կորսնցուցած Ըլլալով Իր Թափը Կը Դիմէ Փոքր Խուճերով Յարձակումներու Փաշինեան Կը Մերժէ Իսրայէլի Մարդասիրական Օժանդակութիւնը

Վերջին օրերուն Հայկական բանակը յաջողեցաւ կտրել Ատրպէյճանա-թրքական ուժերու թափը: Հայկական կողմի կարծիքով Ատրպէյճանական բանակը կորսնցուցած է իր բանակի կանոնաւոր ստորաբաժանումներու կարողականութեան մեծ մասը: Լաչին հասնելու եւ Արցախը շրջափակման տակ առնելու փորձերը ձախողելէ ետք, այժմ թշնամին կը փորձէ փոքր ջոկատներով յարձակումներ կազմակերպել Հայկական դիրքերու ուղղութեամբ: Յատկապէս, անտառներու մէջէն յարձակումներ կազմակերպելով Շուշիի ուղղութեամբ: Այլ ճակատներու վրայ եւս թէժ մարտեր կը շարունակուին տարբեր ուղղութիւններով, սակայն Հայկական ուժերը կը յաջողին ետ մղել հակառակորդին:

Արցախի Պաշտպանութեան Բանակի կը տեղեկացնէ, որ վաշտերու կազմով թշնամին կը ձեռնարկէ յարձակումներ, որոնք յամառ մարտերու հետեւանքով կը կասեցուին, հակառակորդին հասցնելով մեծ կորուստներ՝ մասնելով փախուստի: Փախչող հակառակորդները կ'արգելափակուին ձորերու մէջ, եւ հայկական ուժերու ականանետային կրակով կ'ենթարկուին լիակատար ոչնչացման:

Միւս կողմէ, վարչապետ Նիկոլ Փաշինեան խիստ քննադատութեան ենթարկեց Իսրայէլի կառավարութիւնը, որ կը շարունակէ



Արցախի Պաշտպանութեան Բանակի զինուորները ճակատային դիրքերու վրայ

մահաբեր զինամթերք մատակարարել Ատրպէյճանին:

Պատասխանելով Իսրայէլական The Jerusalem Post թերթի հարցին, թէ Հայաստանը հետաքրքրուած է Իսրայէլի առաջարկած մարդասիրական օգնութեամբ, վարչապետ Նիկոլ Փաշինեանն հետադարձապէս հարց ուղղեց. «Հումանիտար օգնութիւն վարձկաններին գէշ վաճառող երկրի կողմից, որն օգտագործում են քաղաքացիական խաղաղ բնակչութեանը հարուածելու համար»:

Հայաստանի դեսպանի ետ կանչուելէն ետք, Իսրայէլի նախա-

գահ Ռիւվէն Ռիվլինը հեռաձայնած էր իր հայ գործընկերոջը եւ առաջարկած՝ մարդասիրական օգնութիւն:

«Ես առաջարկում եմ, որ Իսրայէլը այդ օգնութիւնն ուղարկի վարձկաններին եւ ահաբեկիչներին՝ որպէս իր գործունէութեան սրամաբանական շարունակութիւն», - շեշտել է Հայաստանի վարչապետը:

Իսրայէլը յայտնուած է միեւնոյն շարքին Թուրքիոյ, ահաբեկիչներու եւ սուրիացի վարձկան-

Շար.ը էջ 4

## Մեծ Հաւանականութեամբ Դո Պայտըն Յաղթական՝ Ամերիկայի Նախագահական Ընտրութիւններուն Թրամի Կը Մերժէ Ընդունիլ Պարտութիւնը

Երեքշաբթի, Նոյեմբեր 3-ին Ամերիկայի նախագահական ընտրութիւնները հասան իրենց աւարտին: Քուէարկութեան մասնակցեցան մօտ 150 միլիոն քաղաքացիներ, որոնք բազմաթիւ նահանգներու մէջ ձայներու ջնջին տարբերութեամբ առաւելութիւնը տուին Դեմոկրատ թեկնածու Դո Պայտընին:

Քուէատուփերու փակուելէ կարճ ժամեր ետք, մինչ ձայներու հաշուարկը կը շարունակուէր, նախագահ Տանտլտ Թրամի յայտարարեց, որ «ինք յաղթած է եւ այժմ փորձ կը կատարուի ձայները կեղծելու»: Թրամիի այս յայտարարութիւնը լուրջ չընդունուեցաւ նահանգներու ընտրական պատասխանատուներուն եւ հեռատեսիլի ալիքներուն կողմէ, որոնք հերթաբար կը հաղորդէին քուէներու արդիւնքները:

Հինգշաբթի երեկոյեան, թերթը մամուլին յանձնելու պահուն ձօ Պայտըն ունէր 253 ընտրական ձայն, իսկ Թրամի՝ 213: Նախագահ



Նորընտիր նախագահ՝ Դո Պայտըն

ընտրուելու համար անհրաժեշտ է 270 ընտրական ձայն:

Ընտրութիւններու վերջնական արդիւնքները կախեալ կը մնան չորս նահանգներու՝ Նեւադա, Արիզոնայի, Ճորճիայի եւ Փենսիլվանիայի արդիւնքներէն:

Առաջին երկուքի պարագային Պայտընը առաջ է ոչ շատ մեծ տարբերութեամբ: Միւս երկու նահանգներուն մէջ Թրամի ունի ջնջին առաւելութիւն, սակայն քուէներու հաշուարկին հետ այդ առաւելութիւնը ժամը-ժամին կը նուազի:

Կանխատեսումները այն են, որ Տանտլտ Թրամի պիտի դառնայ մէկ շրջանի նախագահ, իսկ Պայտըն պիտի գրաւէ Սպիտակ Տունը:

Պարտութիւնը կանխատեսելով Թրամի կը փորձէ դատարաններու միջոցաւ կասեցնել քուէներու հաշուարկը:

Ինչ կը վերաբերի ժողովրդային ընդհանուր ձայներուն հոն եւս ձօ Պայտընը առաջ մ ունի 73 միլիոն ձայն, իսկ Թրամի՝ 69 միլիոն ձայն:

Քալիֆորնիա նահանգին եւ յատկապէս Լոս Անճելըսի մէջ Պայտընը ստացած է ձայներու 70 տոկոսը:

Հայաշատ շրջաններէն Գոնկրէսի անդամ Ատամ Շիֆ վերընտրուեցաւ ձայներու 75 տոկոսով:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Տեղեկատուական Պատերազմն Այսպես Չեն Կարում

ԱՐԻՍ ՎԱՐՈՐՇԱԿԵԱՆ

Պատերազմի սկսուելուց յետոյ շատ է խօսուում, որ հայկական կողմը գիշում է թշնամուն սպառազինութիւնների մասով: Դա փաստ է, բայց նաեւ փաստ է, որ հայ-թուրքական պատերազմներում միշտ էլ այդպէս է եղել: Եւ այդ տխուր վիճակը դժուար թէ յետագայում էլ շտկուի՝ հաշուի առնելով թուրքիայի ռազմական եւ տնտեսական հզորութիւնը:

Պատերազմներում կայ եւս մէկ կարեւոր հարթութիւն, որն էական ազդեցութիւն է թողնում պատերազմի ընթացքի եւ ելքի վրայ: Դա տեղեկատուական պատերազմն է: Անցած 35 օրերը բացառապէս ցուցադրեցին, որ հայկական կողմն այս առումով նոյնպէս գիշում է ատրպէյճանցիներին, մինչդեռ այստեղ նպատակային եւ թիրախային աշխատանքի դէպքում պատկերը այսքան տխուր չէր լինի:

Ատրպէյճանական կողմի վարած տեղեկատուական պատերազմը կարելի է համեմատել կեղտոտ միջուկային գէնք օգտագործելու հետ: Թշնամին բացարձակապէս չի խորշում օգտագործել կեղծիքը, սուտը եւ ապատեղեկատուութիւնը: Դրան հայկական կողմը պատասխանում է բացառիկ բարձր տեղեկատուական պարկեշտութեամբ: Տպաւորութիւն է, որ պատերազմից յետոյ հայկական կողմին լրագրողական է թիկայի սփոփիչ մրցանակ կը յանձնեն:

Ատրպէյճանցիները ստեղծել

են բազում հայկական անուանումներով կայքեր, ֆէյսպուքում կան հարիւրաւոր հայալեզու էջեր, որոնք էական վնաս են հասցնում բանակին եւ թիկունքին: Թշնամին պատրաստուել եւ լիարժէք օգտագործում է համացանցի ընձեռած հնարաւորութիւնները: Մինչդեռ հայկական կողմը ոչ միայն նմանատիպ ռեսուրսներ չի ստեղծել, այլեւ յոյսը դրել է հայկական սիգնալների մեղրագործութեանն վրայ: Այսպիսին՝ մարդիկ կը կարդան եւ ինքնուրոյն կը հասկանան, որ սա թշնամու սարքածն է:

Պատերազմի միայն 20-րդ օրը գլխի ընկան, որ պէտք է սահմանափակել az դոմէյնով կայքերի դիտելու հնարաւորութիւնը մեր երկրում:

Յայտնի ՊՈԱԿ-ը պէտք է ունենար հարիւրաւոր ատրպէյճանագէտներ, թուրքագէտներ ու իրանագէտներ, որոնք կը պատրաստէին եւ անխնայ կը տարածէին Հայաստանի պաշտօնական եւ այն տեղեկատուութիւնը, որը մեզ անհրաժեշտ կը լինէր: Ատրպէյճանական հասարակութիւնը էլ աւելի խոցելի է մեղրագործութեան առումով եւ խուճապ տարածելու առումով կարելի է լուրջ ձեռքբերումներ գրանցել:

Պատերազմի ժամանակ ճշմարտութիւնը մահանում է, եւ աւելի լաւ է անել այն, ինչ անում է Աբրահամ Գասպարեանը, քան հետեւել միջազգային լրագրողական բարձր էթիկական եւ մասնագիտական չափորոշիչներին:

«ՉՈՐՐՈՐԴ ԻՃՆԱՆՈՒԹԻՒՆ»

Աշխարհից Բողոքելու Փոխարէն՝ Կռուել

ԱՐԱՍ ԱՐԱՅԱՍԵԱՆ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը երկու անգամ բաւականին յստակ ձեւով ներկայացրեց իր երկրի դիրքորոշումն ընթացիկ պատերազմի վերաբերեալ: Երկու անգամ էլ նա սկսեց հայերի դէմ բռնութիւններից, որոնք պատճառ դարձան, որ հայկական կողմը սկսեց գինուել եւ կռուել:

Պարզ է, որ այդ մակարդակի ղեկավարները ոչ մի բան պատահաբար չեն ասում՝ դրանով, կարծում եմ, Պուտինը ակնարկում է, որ Արցախի հայաթափումը թոյլ չի տայ: Իհարկէ, ՌԴ նախագահի նման մօտեցումը «հայամետութեանն» հետ կապ չունի՝ պարզապէս թուրքատրպէյճանական սցենարով խնդրի լուծումը կը նշանակի Ռուսաստանի լուրջ աշխարհաքաղաքական պարտութիւն Հարաւային Կովկասում:

Միւս կողմից՝ Պուտինը խօսել է նախկին ԼՂԻՄ-ը շրջապատող 5+2 շրջանների՝ Ատրպէյճանին յանձնելու մասին, որը նոյնպէս, ինչպէս հասկանում էք, այդ պահին նրա մտքով անցած իմպրովիզացիա չէր՝ դրա մասին խօսում է առնուազն 2007 թուականից («Մադրիդեան սկզբունքներ»): Անկախ նրանից, որ այդ խօսակցութիւնները մեզ դուր չեն գալիս, որ մենք դա անընդունելի ենք համարում, այդպիսին է Ռուսաստանի դիրքորոշումը: Պուտինն ասում է նաեւ, որ առաջին հերթին պէտք է կանգ-

նեցնել պատերազմը, արիւնայեղութիւնը եւ այդ համատեքստում լիշատակում է նաեւ թուրքիան (որպէս ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ)՝ ըստ ամենայնի հասկանալով, որ առանց թուրքիայի համաձայնութեանն այս անգամ չի յաջողուի հրադադար հաստատել:

Հնչում են խաղաղապահների մասին առաջարկները, բայց այս հարցում որեւէ յստակութիւն չկայ՝ արդեօք դա այժմ հնարաւոր է եւ թէ՛ այո, ապա որտեղ են նրանք տեղակայուելու, որ երկրի (երկրների) խաղաղապահներ են լինելու: Արդեօք Ատրպէյճանը կը համաձայնի բացառապէս ռուսաստանցի խաղաղապահների տարբերակին: Միացեալ Նահանգների եւ Ֆրանսայի դիրքորոշումն աւելի անորոշ է: Եթէ մի կողմ թողնենք «իրիկան»՝ հայերի նկատմամբ որոշակի համակրանքի դրսեւորումները, ապա այդ երկրները նոյնպէս կարծում են, որ խնդիրը պէտք է կարգաւորուի «մադրիդատիպ» սկզբունքների հիման վրայ: Նրանք նոյնպէս կարծում են, որ պատերազմը պէտք է կանգնեցնել, բայց, ի տարբերութիւն Ռուսաստանի, որեւէ լծակ չունեն Արցախի հայաթափումը կանխելու համար:

Այդպիսին է իրողութիւնը: Դիւանագէտներն, իհարկէ, պէտք է բանակցեն բոլոր շահագրգիռ կողմերի հետ: Բայց ենթադրել, որ այս պատերազմում որեւէ երկիր «մեր կողմից է»՝ անթոյլատրելի միամտութիւն է: Առաւել մերժելի է ձեռները ծնկներին խփելն ու

Յաղթանակի Գանապարհային Քարտեզ

Այս օրերին Հայաստանը, Արցախն ու աշխարհասփիւռ հայութիւնն անում են ամէն ինչ՝ շուտափոյթ յաղթանակի հասնելու համար, եւ «Յաղթելու ենք»-ը դարձել է ոչ միայն տասը միլիոն հայերի, այլեւ այլազգի մեր հարեւակիցների ու օտարերկրեան մեր բարեկամների միակ կարգախօսը: Որ իսկապէս յաղթելու ենք՝ կասկած չկայ, բայց արդէն այսօր կարեւոր է, որ կոնսենսուս ձեւաւորուի նաեւ այն հարցի շուրջ, թէ կոնկրետ ինչպէս ենք պատկերացնում կը համարենք, որ յաղթել ենք: Որովհետեւ մէկը կարող է յաղթանակ ասելով հասկանալ, օրինակ, Պաքոն գրաւելը (եւ եթէ դա տեղի չունենայ՝ կը համարի, որ յաղթանակը լիարժէք չէ), մէկ ուրիշ համար յաղթանակ կը համարուի Քուր գետը հասնելը, երրորդի համար՝ Սեպտեմբերի 27-ից յետոյ կորսուած տարածքները վերադարձնելը, չորրորդի համար՝ այսօրուայ բնագծերը պահպանելն ու թշնամուն հրադադար պարտադրելը, եւ այլն: Ընդ որում, այս հարցի շուրջ հանրութեան մէջ կոնսենսուս պիտի ձեւաւորուի հիմա՝ նախքան պատերազմում արմատական բեկում մտցնելը, որովհետեւ նպատակի յստակեցումն օգնում է աւելի հաստատաբար հասնել դրան, իսկ անորոշութիւնը, հակառակը, թուլացնում ու ապակայունացնում է թիկունքը:

Եւ այսպէս, ինչ պէտք է հասկանալ յաղթանակ ասելով: Ռազմական գործողութիւնների առումով ամէն ինչ կարծես թէ հասկանալի է: Կանգնեցնել թշնամուն եւ ջախջախել նրա ռազմական մեքենայի ողնաշարը (կիսով չափ կատարուած է), ետ շարտել մինչեւ այնպիսի բնագծեր, որտեղից անհնար կը լինի երբեւէ նոր պատերազմ սկսել (թէ որոնք են այդ բնագծերը՝ գինուորականներն աւելի լաւ կ'իմանան), Ատրպէյճանի ժողովրդին ստիպել համակերպուել այն մտքի հետ, որ երբեւէ չեն կարողանալու գրաւել Արցախը, եւ որպէս արդիւնք՝ այդ երկրի իշխանութիւններին պարտադրել աւելի կառուցողական դիրքորոշում որդեգրել բանակցութիւնների սեղանի շուրջ:

Արտաքին քաղաքականութեան առումով յաղթանակը սա է՝ հասնել նրան, որ թուրքիան դուրս մղուի ոչ միայն Հարաւային Կովկասից, այլեւ միջնորդական առաքելութիւն իրականացնող ԵԱՀԿ Մինսկի խմբից, որովհետեւ նոյն պետութիւնը չի կարող միաժամանակ եւ՝ հակամարտութեան անմիջական կողմ լինել, ե՛ւ միջնորդ: Այս ուղղութեամբ էական յաջողութիւններն ակնյայտ են: Յամենայն դէպս մեզ յաջողուել է անհերքելի ապացոյցներ ներկայանցնել ինչպէս թուրքիայի անմիջական ներգրաւուածութեան, այնպէս էլ այդ երկրի կողմից վարձկան-ահաբե-

«աշխարհի անարդարութիւնից» բողոքելը: 100 տարի առաջ բողոքեցինք, դրանից ոչ մի լաւ բան չստացուեց: Մնում է հայկական բոլոր ուժերը հաւաքելը, ատամները սեղմելը եւ կռուելը: Աշխարհը կ'ընդունի այն «բնագծերը», որոնք մենք ենք նուաճել՝ ոչ աւելի, ոչ պակաս: «ԱՌԱՒՈՏ»

կիչների հաւաքագրման եւ Ատրպէյճան ուղարկելու վերաբերեալ, ու դա կամաց-կամաց տալիս է իր արդիւնքները:

Բանակցութիւնների սեղանի շուրջ յաղթանակ ասելով՝ պէտք է հասկանալ ԼՂՀ լիակատար անկախութեան իրաւունքի միջազգային ճանաչումը, Հայաստանի հետ յուսալի ցամաքային կապի իրաւունքի միջազգային ընդունումը եւ անվտանգութեան միջազգային երաշխիքների տրամադրումը: Այս ուղղութեամբ նոյնպէս առաջընթացն ակնյայտ է, որովհետեւ Ատրպէյճանի գործողութիւններն ամբողջ աշխարհին ցոյց տուեցին, որ կոնկրետ այս պատերազմում «անջատում յանուն փրկութեան» սկզբունքն աւելի կարեւոր է, քան պետութիւնների տարածքային ամբողջականութեան սկզբունքը:

Համաձայնութե՛ք՝ եթէ մեզ յաջողուի հասնել այս ամէնին, մեր յաղթանակը կը լինի լիարժէք եւ վերջնական: Ընդ որում՝ սրանք մաքսիմալիստական ծրագրեր չեն, սրանք միանգամայն իրատեսական եւ իրականանալի նպատակներ են, ու մենք դրանց հասնելու ճանապարհին ենք: Իհարկէ՝ շատ դժուար է լինելու, իհարկէ՝ դա մեզանից ուժերի գերլարում ու նորանոր գոհողութիւններ է պահանջելու, բայց նպատակների յստակութիւնը, վստահաբար, եռապատկում է դրանց հասնելու կամքը:

Յաղթելու ենք:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՏՈՒԹՅՈՒՆ
ՄՈՅԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐԽՈՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY



**ԼՈՒՐԵՐ**

### Փաշինեանի Եւ Փութինի Միջեւ Հեռախօսազրոյցները Տեղի Կ'ունենան Ամենօրեայ Կտրուածքով

Հայաստանի վարչապետի եւ Ռուսաստանի նախագահի միջեւ հեռախօսազրոյցներ տեղի կ'ունենան գրեթէ ամէն օր, «Ազատութիւն»ին հաղորդեց վարչապետի մամուլի խօսնակ՝ Մանէ Գէորգեան՝ մեկնաբանելով Նոյեմբեր 1-ին Փաշինեանի եւ Փութինի, ապա Փութինի եւ Ալիեւի միջեւ տեղի ունեցած հեռախօսազրոյցները:



Վարչապետի մամուլի խօսնակ՝ Մանէ Գէորգեան լով դա, որ արտառոց հեռախօսազրոյց չի տեղի ունեցել՝ մենք հաղորդագրութիւն չենք տարածել», - ըսաւ Գէորգեան:

«Չեմ կարող շատ մանրամասներ հաղորդել հեռախօսազրոյցից, բայց կարող եմ ասել, որ նման հեռախօսազրոյցներ գրեթէ ամէն օրուայ կտրուածքով տեղի են ունենում վարչապետի եւ Ռուսաստանի Դաշնութեան նախագահի միջեւ: Հաշուի առնելով, որ ամէնօրեայ կտրուածքով հեռախօսազրոյցները տեղի են ունենում, եւ դրա մասին եւ՛ վարչապետ Նիկոլ Փաշինեանն է ասել իր հարցազրոյցներում, ինչպէս նաեւ Ռուսաստանի Դաշնութեան նախագահն է յայտարարել «Վախժախ» ակումբի իր ելոյթում, զուտ հաշուի առնե-

### Մնացականեան. ԵՆ-ը Պէտք է Պաշտպանէ Արցախի Քաղաքացիներուն Ապրելու Իրաւունքը

«Եւրոպայի խորհուրդը պէտք է վճռականութիւն ցուցաբերի եւ պաշտպանի Արցախի հասարակ քաղաքացիների ապրելու իրաւունքը, ինչպէս դա պահանջել է Եւրոպական դատարանը Հայաստանի դիմումի հիման վրայ», - յայտարարած է Հայաստանի արտաքին գործոց նախարար Զօհրապ Մնացականեան՝ ելոյթ ունենալով ԵՆ Նախարարներու կոմիտէի 130-րդ առցանց նստաշրջանին:



Հայաստանի ԱԳՆ-ը կը տեղեկացնէ, որ իր ելոյթին Մնացականեան ներկայացուց Արցախի դէմ Ատրպէյճանի կողմէ սանձազերծուած լայնամասշտապ յարձակման հետեւանքները՝ ուղեկցող պատերազմի յանցագործութիւններով, մարդու իրաւունքներու եւ ԵՆ իրաւապայմանագրային կարգի խախտումներով:

Հայաստանի ԱԳՆ-ը կը տեղեկացնէ, որ իր ելոյթին Մնացականեան ներկայացուց Արցախի դէմ Ատրպէյճանի կողմէ սանձազերծուած լայնամասշտապ յարձակման հետեւանքները՝ ուղեկցող պատերազմի յանցագործութիւններով, մարդու իրաւունքներու եւ ԵՆ իրաւապայմանագրային կարգի խախտումներով:

Նախարար Մնացականեան յորդորած է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու կազմակերպութեան անարգել մուտքը հակամարտութեան գոտիներ:

ԱԳ նախարարը նշած է, որ «Թուրքիոյ կողմէ Ատրպէյճանի մէջ զինեալ ահաբեկիչներու տեղակայումն այդ երկու երկիրներու կողմէ ստորագրուած ԵՆ առնուազն երեք համաձայնագիրներու խախտում է»:

Զօհրապ Մնացականեան նաեւ ներկայացուցած է, որ ինչպէս ահա-

### «Ատրպէյճան Պիտի Երթայ Մինջեւ Վերջ». Ըսած է Չաւուշօղլու

«Ատրպէյճանը կ'երթայ մինչեւ վերջ, եթէ դարաբաղեան հարցը արագօրէն չլուծուի բանակցային սեղանի շուրջ», - յայտարարած է Ատրպէյճանի նախագահը Թուրքիոյ արտաքին գործոց նախարարի հետ հանդիպումէն ետք: Չաւուշօղլուն Պաքու ժամանած է այսօր առաւօտեան՝ դարաբաղեան հարցը քննարկելու: «Մենք կրկին Պաքու ենք՝ Ատրպէյճանին մեր ամուր աջակցութիւնը վերահաստատելու եւ Լեւոնային Ղարաբաղի վերջին զարգացումներու շուրջ մտքեր փոխանակելու համար», - գրած էր ան Twitter-ով: Չաւուշօղլուի այցէն առաջ՝ շաբաթուայ սկզբին, Ալիեւ ըսած էր, թէ Պաքուի համար ընդունելի է ինդիի կարգաւորումը 2+2 ձեւաչափով՝ կողմերու, ինչպէս նաեւ Թուրքիոյ եւ Ռուսաստանի մասնակցութեամբ: «Այս ընդունալի տարբերակ է մեզ համար, քանի որ եւ՛ Թուրքիան, եւ՛ Ռուսաստանը մեր հարեւան երկիրներն են, որոնք սերտ փոխյարաբերութիւններ ունին, եւ երկիրներ, որոնք նաեւ իրար միջեւ համագործակցութեան մեծ ներուժ ունին», - ըսած էր Ատրպէյճանի նախագահը:

### Արսէն Ղազարեանի Կարծիքով, 2020-ը Ցոյց Տուաւ, Որ Անհաւանական Կենսունակ Տնտեսութիւն Եւ Պետութիւն Ունինք

«Քորոնա» ժահրով ու պատերազմով ուղեկցող ծանր 2020 թուականը ցոյց տուաւ, որ Հայաստանի պետական համակարգը, հասարակութիւնը եւ տնտեսութիւնը անհաւանական կենսունակ են՝ այսօր «Ազատութիւն»ին հետ զրոյցի ընթացքին նման կարծիք յայտնեց Հայաստանի արդիւնաբերողներու եւ գործարարներու միութեան նախագահ՝ Արսէն Ղազարեան:



Հայաստանի արդիւնաբերողներու եւ գործարարներու միութեան նախագահ՝ Արսէն Ղազարեան

Նոյեմբեր 2-ին խորհրդարանէն ներս ներկայացուած 2021 թուականի պետական պիւտճէի նախագծի համաձայն, այս տարի Հայաստանը կը փակէ 6 տոկոս տնտեսական անկումով, թէեւ Ֆինանսներու նախարար Ատոմ Ճանճուղաբեան չբացառեց, որ անկումը աւելի մեծ ըլլայ՝ 6,8 տոկոս: Իսկ մօտ մէկ շաբաթ առաջ Կեդրոնական դրամատան նախագահ՝ Մարտին Գալստեան լրագրողներու հետ հանդիպման խօսեցաւ շուրջ 7 տոկոս անկման մասին:

բեռնահամալիրներում ամէն օրուայ մշտադիտարկումով երբ դիտարկում ենք բեռների քանակը, մէկ, երկու տոկոս, երեք տոկոս նուազում կայ: Արտահանումը, ի շնորհիւ նաեւ հանքարդիւնաբերութեան աննախադէպ քանակական աճի, կրկին էական կորուստներ չունի:

«Թուրքի այս անկումը, որ թէ՛ Համաշխարհային դրամատունն էր կանխատեսում, թէ՛ մեր Կեդրոնական դրամատունը, ինչպէս նշեցիք, Կառավարութիւնն է յայտնում՝ 6, 6,5, 7 տոկոս, դա այսօրուայ իրավիճակի համար տանելի թիւեր են: Ես միշտ լիշու եմ 2008-9 թուականների ֆինանսատեսական ճգնաժամը, երբ մեր Համախառն ներքին արդիւնք (ՀՆԱ) անկում ունեցաւ մինչեւ 14 տոկոս, եւ որմէ յետոյ մենք կարողացանք տնտեսութիւն վերականգնել եւ որոշակի լուրջ աճ ապահովել: Այս տարուայ կորուստները, տարբեր նախապայմաններով նշուած, տնտեսութեան հետագայ վերականգնման համար բացարձակ կործանարար չեն: Տեսէք, մէկ ամիս է մենք ռազմական գործողութիւնների մէջ ենք, բայց Հայաստանի ներկրումների եւ արտահանումների տոկոսը էական նուազում չի ապրել: Բոլոր

Եւ տեսէք, վարչապետը մի քանի օր առաջ նշեց, որ ինքը հաճելի զարմացած է, որ 48 միլիարդ պիւտճէի եկամուտների մասը աւել է լինելու այս տարի, որովհետեւ գործարարները դրսեւորել են այդպիսի վարքագիծ: Այսինքն՝ դա միայն այն չէ, որ մենք հասկանում ենք, հայրենասէր ենք, ընկերային պարտաւորութիւն ենք գզում, կամ ամէն մէկ մեր խրամատում ուզում ենք արդիւնք ցոյց տալ: Դա իրական տնտեսութեան պատկերն է, որ հնարաւորութիւն է տալիս ունենալ եկամուտներ: Պարզ է, որ այս 48 միլիարդ եկամտային աճի մէջ մեծ է նաեւ ստուերային տնտեսութեան էական նուազումը:

### Այս Պահուն Միջազգային Շատ Լուրջ Գնշում Կայ Ատրպէյճանի ու Թուրքիոյ Վրայ. Դաւիթ Պապայեան

Արցախի նախագահ՝ Արայիկ Յարութիւնեանի՝ արտաքին չարաբերութիւններու գծով խորհրդական՝ Դաւիթ Պապայեան «Առաջին Լրատուական»-ի հետ զրոյցին նշեց ըսած է որ, Պաքուի հնչեցուցած սպառնալիքները նորութիւն չեն:

տորաբանութիւնից: Նրանք շարունակում են ցեղասպան քաղաքականութիւնը, ու մենք տեսնում ենք, թէ ինչպիսի քայլեր են մշակում: Թուրքիան առհասարակ փորձում է ամէն ինչ անել, որպէսզի մասնետականների զգացմունքների վրայ խաղայ, նաեւ փորձում է ենթադրութիւններ անել: Մենք տեսնում ենք, թէ ինչպիսի արձագանգ է ստացել Մաքրոնի ելոյթը: Թէպէտ ասեմ, որ «Շառլի էպտո» ամսագիրը կեղտոտ նիւթեր է հրապարակում, վիրաւորում ոչ միայն մասնետականների, այլեւ քրիստոնեաների զգացմունքները: Չի բացառուում, որ հենց այդ ամսագրի յետեւում կանգնած են Թուրքիան ու նմանատիպ ուժեր: Այն, ինչ անում է այդ ամսագիրը, միմիայն ծառայում է ծայրայեղականութեան: Մենք դա պէտք է հաշուի առնենք»:

«Այդ սպառնալիքները մեզ համար նորութիւն չեն, եւ այնպէս չէ, որ հիմա Ատրպէյճանը հանգիստ նստած է: Այս պահուն կը զգացուի միջազգային շատ լուրջ ճնշում Թուրքիոյ ու Ատրպէյճանի վրայ: Քիչ մըն ալ սպասենք ու կը տեսնենք շատ աւելի յստակ արդիւնքներ»:

«Մենք համակարծիք ենք, որ պէտք է հրաժարուել ատելութեան խօսքից, սակայն մենք տասնամեակներ շարունակ ապրում ենք մեր հարեւաններից երկուսի կողմից հնչող ատելութեան հռետորաբանութեան պայմաններում», ըսած է Պապայեան:

Ըստ Պապայեանի՝ անհրաժեշտ է ամէն ինչ ընել, որպէսզի կանգնեցուի պատերազմը. «Այս արդէն իսկ յղի է տարածաշրջանային ու համաշխարհային բախումներով, եւ ամէն ինչ տանում է դրան: Այս ամէնի ներքոյ անհրաժեշտ է դիմել տարբեր քայլերի: Միջազգային հանրութեան կողմից Ատրպէյճանին ճնշելու այլ քայլեր են մշակուում: Մի քիչ սպասենք: Իսկ վերը նշուած յայտարարութիւնը հերթականն է: Նրանք երբեւիցէ չեն հրաժարուել այդ հռե-



# ԼՈՒՐԵՐ

## Փուլթինի Կը Յայտարարէ Որ, Ռուսական Կողմը Կ'ընէ Ամէն Ինչ Կարգաւորման Յամար

Ռուսաստանի նախագահը Նոյեմբեր 4-ին, հաւաստիացուցած է, որ ռուսական կողմը կ'ընէ եւ պիտի ընէ իրմէ կախուած ամէն ինչ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման համար: Այս մասին Ռուսաստանի նախագահը յայտարարած է Ռուսաստանի կրօնական միաւորումներու ներկայացուցիչներու հետ աւանդական հանդիպման ժամանակ:

Ռուսաստանի նախագահը նաեւ համոզմունք յայտնած է, որ հակամարտող կողմերը իրենց նպատակներուն կրնան հասնիլ խաղաղ բանակցային գործընթացի միջոցով: «Յամենայն դէպս, մենք կապի մէջ ենք թէ՛ Հայաստանի, թէ՛ Ատրպէյճանի հետ: Յուսով եմ, որ կը յաջողինք արդիւնքի հասնիլ, ընդ որում՝ այնպիսի հիմքի վրայ, որ կը բաւարարէ տարածաշրջանը ապրող բոլոր մարդիկը», - ըսած է նախագահը:

Երէկ, «Քոմերսանթին» թերթին տուած հարցազրոյցին, որու մեծ մասը նուիրուած էր դարաբաղեան հակամարտութեան, Ռուսաստանի արտաքին գործոց նախարարը հերթական անգամ կոչ ըրած էր դարաբաղեան հակամարտութեան կողմերուն եւ անոնց արտաքին գործընկերներուն անշեղօրէն յարգել կրակի դադրեցման, վերահսկողական մեքենակառութիւններու ստեղծման եւ յստակ ժամանակացոյցով բովանդակային բանակցային գործընթացի վերսկսման վերաբերեալ պայմանաւորուածութիւնները: Սերէյ Լաւրով ընդգծած էր, որ չնայած դեռ չէ ընդշտած հասնիլ հրադադարի, Մոսկուան կը շարունակէ ամէն ինչ ընել Պաքոսին եւ Երեւանին բանակցային սեղանի շուրջ նստեցնելու համար՝ ասոր հետ մէկտեղ շեշտելով, որ առանց վերահսկող մեքենակառութիւններու, հրադադարին հնարաւոր չէ հասնիլ:

Հարցազրոյցին Լաւրով անդրադարձած էր նաեւ ահաբեկիչներու



Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Փուլթին

րու թեմային՝ ընդգծելով, որ Ղարաբաղի մէջ կռուող վարձկանահաբեկիչներու թիւը կը հասնի 2000-ի՝ աւելցնելով, որ այս հարցը ՌԴ ղեկավարութիւնը պարբերաբար կը բարձրաձայնէ: Ասոր հետ մէկտեղ կարմիր թելով այս հարցազրոյցին կ'անցնէր այն միտքը, որ Ռուսաստանը չի պատրաստուիր խաղաղութիւն պարտադրել կողմերէն եւ ոչ մէկուն, փոխարէնը պիտի փորձէ այսուհետ եւս համոզել անոնց դադրեցնելու ռազմական գործողութիւնները:

Լաւրով կրկին անգամ ընդգծած էր հարցազրոյցին, որ Ռուսաստանը դէմ է, որ փոխուի հակամարտութեան միջնորդներու ձեւաչափը, խօսքը Մինսքի խումբի համանախագահներու մասին է, սակայն կարեւորելով թուրքիոյ դերն ու ազդեցութիւնը Ատրպէյճանի վրայ՝ Մոսկուան կ'աշխատի եւ կը շարունակէ աշխատիլ նաեւ թուրքիոյ հետ հակամարտող կողմերուն բանակցային սեղանի շուրջ նստեցնելու ուղղութեամբ:

Աւելցնենք, որ Ռուսաստանի փոխարտաքին գործոց նախարար՝ Անտոն Լոկոսնիցովն երէկ յայտարարած էր, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներու հանդիպում օրակարգին վրայ դեռ չկայ:

## Արցախի Մէջ Գերեզարուած Է Յերթական Սուրիացի Կարծկանը

Արցախի Պաշտմանութեան Բանակի ստորաբաժանումներու կողմէ մարտական գործողութիւններու ընթացքին գերեզարուած է հերթական սուրիացի վարձկանը, որ, ինչպէս պարզուած է նախնական հարցաքննութեան ժամանակ, 1988-ին ծնունդը, Սուրիոյ Իտլիպ նահանգի «Ճըսը ալ-Շուդուր» շրջանի Զիատիա գիւղի բնակիչ Եուսէֆ Ալաապըտ ալ Հաճին է:

Ամուսնացած է: Ունի 5 երեխայ:

Արցախի մէջ, իր խօսքերով, «քաֆէրներու» (անհաւատներու) դէմ կռուելու համար անոր խոստացուած է ամսական 2000 տոլար վարձավճար ու եւս 100 տոլար «պարգեւավճար»՝ ամէն «քաֆէրի» գլուխ կտրելու համար:

Միւս կողմէ, Մարդու իրաւունքներու Սուրիական Դիտարանը յայտնած է, թէ խումբ մը վարձկաններ ամէն ինչէ հրաժարած են՝ նիւթական եւ այլ տեսակի վճարներէ, ու նախընտրած են Ատրպէյճանէն Սուրիա վերադառնալ,



Yousef Abef Elhajji, I'm from the Jisir Shughur region.

Գերի ինկած սուրիացի վարձկան Եուսէֆ Ալաապըտ ալ Հաճի

այնտեղ ընթացող կատաղի մարտերուն պատճառով:

Ըստ վերոնշեալ աղբիւրին, Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանին մէջ մարտերը ահաւոր լարուած վիճակով կը շարունակուին. սուրիացի վարձկանները պատերազմի առաջին ճակատներուն վրայ են, իրողութիւն, որ մեծ ճնշումներ կը ստեղծէ թուրքիոյ վրայ:

## Ֆրանսայի Կառավարութիւնը Արգիլեց «Գորշ Գայլերու» Գործունէութիւնը

Ֆրանսայի կառավարութիւնը այսօր՝ Նոյեմբեր 4-ի կայացած նիստի ընթացքին, պաշտօնապէս որոշած է երկրի տարածքին վրայ արգիլել թուրք ազգայնականները միաւորող «Գորշ գայլեր» կազմակերպութեան գործունէութիւնը: «Այս կազմակերպութիւնը խտրականութիւն եւ ատելութիւն կը տարածէ, իսկ անոր անդամները ներգրաւուած են բռնի գործողութիւններու մէջ», - կառավարութեան նիստի աւարտին Twitter-ով գրած է Ֆրանսայի ներքին գործոց նախարար՝ Ժերալտ Տարմանէն:

Կազմակերպութիւնը ֆրանսացի իրաւապահներու ուշադրութեան կեդրոնը յայտնուեցաւ նախորդ շաբաթավերջին Լիոնի մէջ տեղի ունեցած շարք մը հակահայկական բնոյթի միջադէպերէն յետոյ: Անոնցմէ մէկու ընթացքին յարձակման ենթարկուած էին Լի-



Ֆրանսայի ներքին գործոց նախարար՝ Ժերալտ Տարմանէ

ոն ապրող հայերը, ինչի հետեւանքով չորս մարդ վիրաւորուած էր: Նախորդ հանգստեան օրերուն թուրք ազգայնականները պղծած էին Լիոն գտնուող Հայոց ցեղասպանութեան յուշահամալիրը:

## Արեւմտեան Աղբիւրներու Յամաձայն Սուրիացի Կարծկանները Ծանր Կորուստներ Կրեւծ Են

Արեւմտեան աղբիւրներու համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի մէջ ծաւալուած մարտական գործողութիւններու ընթացքին զոհուած է Սուրիոյ հիւսիսին մէջ գործող թրքամէտ խմբաւորումներէն մէկու՝ «Համգա» բաժանումունքի հրամանատարներէն մէկը: Այս մասին Twitter-ի իր օգտահաշուին գրած է Սուրիոյ մէջ ընթացող քաղաքացիական պատերազմի եւ երրորդ երկիրներուն մէջ ընթացող պատերազմներուն սուրիացի վարձկաններու մասնակցութեան վերաբերեալ շարք մը հրապարակումներու հեղինակ լրագրող՝ Էլիզապէթ Յուրթովը: Անոր տեղեկութիւններով՝ սպաննուածը «Համգա»-ի կազմէն ներս գործող 80-րդ ջոկատի հրամանատար Օմար Ալ-ձալապին է:

«Նոյեմբեր 1-ին Ատրպէյճանի մէջ սպաննուած եւս 9 սուրիացիներու մարմինները թուրքիոյ հետ սահմանին գտնուող «Հիւար Քիլիս» անցակէտով վերադարձուած են հայրենիք», - կը նշէ Յուրթովը՝ վկայակոչելով սահման գտնուող իր աղբիւրները:

Լրագրողի տեղեկութիւններով, ի դէպ, Ղարաբաղ վարձկաններ ուղարկած թրքամէտ միւս խմբաւորումները եւս վերջին օրերուն լուրջ կորուստներ կրած են:

«Թուրքիոյ աջակցութիւնը վայելող եւս մէկ խմբաւորման՝ «Սուլթան Մուրատի» տասնեակ զինեալներ Լեռնային Ղարաբաղի

մէջ անհետ կորած են: Զինեալները մոլորուած են, քանի որ ծանօթ չեն տեղանքին», - կը նշէ Էլիզապէթ Յուրթովը՝ չիշեցնելով, որ սուրիացի վարձկաններէն առնուազն երկուքը գերեզարուած են հայկական ուժերու կողմէ:

Յուրթովի տեղեկութիւններու մէկ մասը կը հաստատէ նաեւ Մեծ Բրիտանիոյ մէջ գործող «Մարդու իրաւունքներու դիտարկման սուրիական կեդրոնը»: Շաբաթ օր իրաւապաշտպան կառույցը նոր տեղեկութիւններ հրապարակած է Լեռնային Ղարաբաղի մէջ զոհուած սուրիացի վարձկաններու մասին՝ նշելով, որ անոնց թիւը Հոկտեմբեր 31-ի դրութեամբ հասած է 231-ի:

«Վստահելի աղբիւրներու համաձայն՝ թուրքիոյ աջակցութիւնը վայելող սուրիական խմբաւորումները դեռ կը շարունակեն ծանր կորուստներ կրել Լեռնային Ղարաբաղի մէջ: Վերջին ժամերուն այս տարածքին մէջ 14 սուրիացի զինեալ զոհուած է», - նշուած է կեդրոնի կայքին մէջ:

Նոյն աղբիւրի համաձայն՝ անցեալ շաբաթավերջին եւս 20 զինեալներու մարմիններ թուրքիոյ տարածքով բերուած Սուրիոյ հիւսիս՝ հիմնականին մէջ Հալէպի նահանգի այն շրջանները, որոնք կը վերահսկուին թրքամէտ խմբաւորումներու կողմէ:

Ընդհանուր առմամբ Լեռնային Ղարաբաղի մէջ զոհուած են 231 սուրիացիներ:

## Ատրպէյճանի Բանակը Կորսնցուցած

Շարունակուած էջ 1-էն

ներու հետ՝ այս պատերազմին Ատրպէյճանին սատարելու հարցով, եւ, ի վերջոյ, տուժելու է այդ դաշինքին միանալու հետեւանքով:

Երեւանէն տեսակապի միջոցով, «The Jerusalem Post»-ի հետ զրոյցի ընթացքին Փաշինեան կոշտ մեղադրանքներ հնչեցուց Երուսաղէմի հասցէին՝ Ատրպէյճանին սպառնալիցութիւն մատակարարելու եւ հայերու դէմ ցեղասպանութիւն իրականացնելու համար Լեռնային Ղարաբաղի մէջ:

«Կարծում եմ, որ Իսրայէլը

պէտք է մտածի հետեւեալի մասին», - ըսաւ վարչապետը աւելցնելով, - «Փաստօրէն վարձկանները, ահաբեկիչները եւ Իսրայէլը, ըստ էութեան, հիմա կը գտնուին նոյն կողմում: Իսրայէլն ինքը պէտք է մտածի, թէ սա որքանով յարմար դիրքաւորում է իր համար»:

«Իսրայէլը նաեւ պէտք է մտածի, թէ իսկապէս ցանկանում է հակամարտութեան մէջ լինել թուրքիացի հետ նոյն կողմում, որը, նրա պնդմամբ, Սիւրիայից հազարաւոր վարձկանների է տեղափոխել Ատրպէյճան՝ Լեռնային Ղարաբաղի դէմ կռուելու համար»:



# Գերմանիոյ Պունտեսթակը Ղարաբաղի Հարցով Յատուկ Երկու Նիստ Հրավիրած է



## Գերմանիոյ Խորհրդարանի Դահլիճը

Գերմանիան եւ միջազգային հանրութիւնը պիտի չընդունին զարաբաղեան հակամարտութեան ռազմական լուծումը, յայտարարած է դաշնային հանրապետութեան արտաքին գործոց նախարար՝ Հէյքօ Մասսը Պունտեսթակի մէջ՝ յատուկ զարաբաղեան հարցի շուրջ հրաւիրուած նիստի ընթացքին:

«Մեր առաջնային նպատակներէն է կրակի դադարեցումը՝ առանց նախապայմաններու, եւ այդ միայն մեր պահանջը չէ, այլեւ միջազգային հանրութեան», - ըսած է Գերմանիոյ արտաքին գործոց նախարարը, ընդգծելով, որ Պերլինը այդ ուղերձը կը փոխանցէ ոչ միայն Հայաստանին ու Ատրպէյճանին, այլեւ Թուրքիոյ իշխանութիւններուն:

«Մեզի այլ բան չի մնար ընել, քան զօրացնել միջազգային ճնշումը բոլոր կողմերուն վրայ, որպէսզի անոնք հասկնան, որ միջազգային հանրութիւնը չընդունիր այս խնդրի ռազմական լուծումը: Խաղաղ կարգաւորումը այլընտրանք չունի: Եւ Թուրքիան, որպէս ԵԱՀԿ Մինսքի խումբի անդամ, պէտք է գիտակցի իր պատասխանատուութիւնը՝ հակամարտութեան խաղաղ լուծումը գտնելու հարցով», - շեշտած է նախարարը:

Մինչդեռ պատգամաւորները, այդ շարքին՝ իշխող Քրիստոնեայ-դեմոկրատական խմբակցութեան անդամները, կը պնդէին՝ Գերմանիան կրնա՛յ եւ պէ՛տք է աւելին ընէ:

«Սա պատերազմ է Եւրոպայի մէջ, եւ մենք չենք կրնար լոկ հանդիսատեսի դեր ստանձնել», - յայտարարած է Անկելա Մերքէլի կուսակից Եոհան Ուտեփօլը՝ կրաւորականութեան մէջ մեղադրելով նաեւ Եւրոպական յանձնաժողովի նախագահը ու Եւրոմիութեան արտաքին գործոց նախարարը: - «Մենք պէտք է շատ յստակ ուղերձ յղենք Ատրպէյճանին, քանի որ կասկած չկայ, որ Պաքուս սկսած է այս յարձակումը: Ատրպէյճանը պիտի հասկնայ, որ կը կորսնցնէ ԵՄ-ի որեւէ աջակցութիւն, եթէ չվերադառնայ բանակցային սեղան»:

Ընդդիմադիր Ձախերու խմբակցութեան պատգամաւոր կրե-

կոր կիզիին ընդգծած է՝ միազգային համայնքը չի կրնար զուտ յայտարարութիւններով սահմանափակուիլ, քանի դեռ Ղարաբաղի բնակչութիւնը կանգնած է մարդասիրական աղէտի շեմին, պատերազմն ալ կ'ընթանայ ռազմական յանցագործութիւններով:

Հասցեական գնահատական ու յստակ քայլեր՝ այս պահանջը պատգամաւորներէն շատերը կը դնէին, ընդ որում, ոչ միայն Գերմանիոյ իշխանութիւններու, այլեւ Եւրոմիութեան ղեկավարներու առջեւ:

«Ղարաբաղեան պատերազմը անգամ մը եւս ցոյց տուաւ, թէ ինչ կ'ըլլայ, երբ մենք ձեռքերնիս ծած նստինք, եւ թոյլ տանք, որ ստեղծուած պարագութիւնը օգտագործեն միւս պետութիւնները, որոնք բնաւ ալ շահագրգռուած չեն խաղաղութեամբ ու կայունութեամբ», - յայտարարած է կանաչներու ներկայացուցիչ Մանուէլ Սարգսիւնը:

«Եւրոպան տարիներ շարունակ պարզապէս քնացած էր Ղարաբաղեան հակամարտութեան հարցի հանդէպ: Ժամանակն է արթննալու եւ պատասխանատուութիւն ստանձնելու», - նշած է Սարգսիւնը:

Նոյնը պնդեց «Այլընտրանք Գերմանիոյ համար» խմբակցութեան պատգամաւոր Շթեֆան Քոթրէն՝ մէկը այն գերմանացի պատգամաւորներէն, որ շաբաթներ առաջ այցելած էր Ղարաբաղ ու իր աչքերով տեսած այնտեղ ստեղծուած իրավիճակը: Ան շեշտադրած է՝ ելույթներու ժամանակը վաղուց անցած է, այսօրուան հրամայականն է գործի անցնիլը: «Դաշնային կառավարութիւնը պէտք է բոլոր մակարդակներով դադարեցնէ Թուրքիոյ աջակցութիւնը, սառեցնէ գէնքը՝ զինամթերքի մատակարարումներն ու պատժամիջոցներ սահմանէ», - յայտարարած է ան:

Ի դէպ, Ելույթ ունեցողներէն շատերը գուգահեռներ կը տանէին 1915-ի եւ այսօրուան միջեւ: «Այն ժամանակ Գերմանիան լռեց, հիմա պէտք չէ աչք փակենք անարդարութեան վրայ, ու թոյլ տանք, որ պատմութիւնը կրկնուի», - պնդած է իշխող Քրիստոնեայ-դեմոկրատական կուսակցութեան պատգամաւոր Մանֆրետ Կրունտը:

# Լիբանանեան Ուժեր Կուսակցութեան Պատուիրակութիւնը Կ'այցելէ ՍԴՀԿ-ի Գրասենեակ



Լիբանանեան Ուժեր կուսակցութիւնը ներկայացնող պատուիրակութիւնն մը, որուն մաս կազմեցին երեսփոխաններ Իմատ Ուաքիմ եւ էտի Ապի Լամաա, նախկին նախարարներ Մըլէմ Ռիէշի եւ Ռիշար Գուլուճեան, այսօր կէսօրին այցելեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Նոր Հաճնոյ կեդրոնը, ուր տեսակցեցաւ կուսակցութեան ղեկավարութեան հետ՝ գլխաւորութեամբ Լիբանանի շրջանի վարիչ Մարմինի ատենապետ Ընկ. Սեպուհ Գալփաքեանի:


Տեսակցութեան նպատակն էր զօրակցութիւն ցուցաբերել Արցախի մէջ տեղի ունեցած զարգացումներուն եւ ատրպէյճանական անմարդկային ոճիրներուն եւ անարդարութիւններուն լոյսին տակ: Ժողովականները միտքեր փոխանակեցին Արցախի պատերազմին եւ հատապ թղթածրարներուն շուրջ,

ապա հիւր պատուիրակութեան անունով լրատուամիջոցներուն առջեւ խօսք առաւ երեսփոխան Ապի Լամաա, Լիբանանեան Ուժեր կուսակցութեան անունով աջակցութիւն յայտնելու հայ ժողովուրդի արդար պահանջներուն:

Ընկ. Գալփաքեան իր կարգին դիտել տուաւ, որ Լիբանանեան Ուժեր կուսակցութիւնը մշտական աջակցութիւնը յայտնած է հայ ժողովուրդին, որ Արցախի մէջ ճակատագրական մարտեր կը մղէ ահաբեկչական կազմակերպութիւններուն եւ թուրք-խսրայէլեան աջակցութիւն վաչելող ատրպէյճանական ուժերուն դէմ:

Ընկ. Գալփաքեան նաեւ շնորհակալութիւն յայտնեց Լիբանանեան Ուժեր կուսակցութեան եւ անոր առաջնորդ Սամիր Ժաաթահին՝ հայ ժողովուրդին ու Հայ դատին ցուցաբերուած յարատեւ զօրակցութեան համար:

# 73 Պետութիւն Բնակող Սօս Կես Միլիոն Հայեր Հանգանակած են Աւելի Քան 165 Միլիոն Տոլար



«Հայաստան» համահայկական հիմնադրամը կը հաղորդէ անախաղէպ՝ աւելի քան 164 միլիոն տոլար հանգանակելու մասին, ընդ որում հիմնադրամի գործադիր տնօրէն՝ Հայկակ Արշամեան յայտնած է, աշխարհով մէկ ընթացող հանգանակութեան մասնակցած են 73 պետութիւններ բնակող աւելի քան կէս միլիոն հայեր:

Հաւաքուած 164 միլիոն տոլարի 45,3 տոկոսը ապահոված են Միացեալ Նահանգներու, 33,3 տոկոսը՝ Հայաստանի, 10,7 տոկոսը՝ Ռուսաստանի, 2,9 տոկոսը՝ Ֆրանսայի եւ 1 տոկոսը՝ Գերմանիոյ մէջ բնակողները: Մնացեալ 68 երկիրներ բնակողները ապահոված են ողջ հանգանականութեան 6,8 տոկո-

սը կամ 10,2 միլիոն տոլար: Հաշուի առնելով դրամահաւաքին մասնակցութեան բարձր թիւերը՝ Արշամեան համազգային բնորոշեց ներկայի հանգանականութիւնը - «Ես վստահ եմ, որ մեր նուիրատուները տալիս են այն, ինչ որ հնարաւոր է ուղղակի, այն, ինչ որ կարողանում են: Եւ իմ համար նոյնքան թանկ է այն տատիկի հինգ հազար դրամը, որը ուղղակի ներողութիւն էր խնդրել, որ աւել չի կարող տալ, եւ ինքը շատ լուրջ առողջական խնդիրներ ունէր, նոյնքան թանկ է նաեւ ամենախոշոր նուիրատուների՝ տարբեր ընտանիքների, յայտնի մեծահարուստների նուիրատուութիւնները»:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք  
**«Մասիս» Շաբաթաթերթին**  
[www.massispost.com](http://www.massispost.com)



# Արմեն Սարգսեան. Կայ Միայն Մէկ ճանապարհ՝ Բանակցային, Մնացած Ամէն Ինչ Փակուղի է Տանում

Հանրապետութեան նախագահ Արմեն Սարգսեանը բացառիկ հարցազրոյց է տուած է ռուսաստանեան РБК հեռուստարկերութեանը խօսելով զարբադեան հարցի զարգացումներուն եւ Ռուս-Հայկական յարաբերութիւններուն մասին:

Հարցազրոյցը կը ներկայացնենք որոշ կրճատումներով:

Հարց.- Պարոն նախագահ, իրավիճակը Լեռնային Ղարաբաղում մօտեցել է գազաքննակտին: Այսօր առաջին պլանում, ի հարկէ, պատերազմն է, սակայն գուցէ պէտք է դրա արմատներն անցեալում փնտրել: Կարո՞ղ էր արդեօք Խսիմը լուծել զարաբադեան հարցը:

- Թերեւս պէտք է գնալ հարցի արմատները: Ղարաբաղը Հայաստանի մաս է, այստեղ հայերը բնակութիւն են հաստատել հազարաւոր տարիներ, 4-րդ դարաւազը բնի դարձել են քրիստոնյայ: Նրանք շատ կայունութիւններ են տեսել, որոնք եկել ու գնացել են, այնուհետեւ դարձել են Ռուսական կայսրութեան մաս:

1920-ականներին ստեղծուեց այն հիմնախնդիրը, որն ունենք այսօր, քանի որ Խորհրդային Միութեան այն ժամանակուայ ղեկավարութեան որոշմամբ Ղարաբաղը տրուեց Ատրպէյճանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեանը:


1988-ից յետոյ սկսուեցին իրադարձութիւններ, որոնք դարձան Բաքուի նպատակներէ բաց ինդիկատորները՝ տեղի էին ունենում հայերի զանգուածային էթնիկ գաղթներ, ինչպէս՝ Սուճաքի-Թուրքի, Բաքուի, Մարաղայում: Խօսքը աւելի քան կէս միլիոն հայ փախստականների մասին է, ովքեր լքեցին Ատրպէյճանը, ինչից յետոյ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դէմ պատերազմ սկսուեց:

Այսօրուայ իրադարձութիւնները, այդ թւում՝ Բաքուի զանգուածային հարուածները Ղարաբաղի քաղաքացիական օբյեկտներին հերթական անգամ ապացուցում են հէնց այս փաստը:

Ձեր հարցին յստակ պատասխանելով, պէտք է ասեմ՝ այո, եթէ Խորհրդային Միութեան ղեկավարութիւնը 1920-ականների սկզբին նման որոշում չընդունէր, նման խնդիր չէր լինի: Եթէ ԽՍՀՄ ղեկավարութիւնը 1960-70-80-ականներէից յետոյ ունենար ամուր քաղաքական կամք, կը կարողանար խնդիրը լուծել խաղաղ ճանապարհով՝ Խորհրդային Միութեան ներսում: Սակայն դա տեղի չունեցաւ պարզ պատճառով՝ ԽՍՀՄ ղեկավարութիւնն այդքան ուժեղ կամ նպատակաւոր չէր, որպէսզի ներքին խնդիրները կարգաւորէր, եւ ամէն բան թողնէր ապագային:

Հարց.- Ինչո՞ւ Հայաստանը մինչ օրս չի ճանաչել Լեռնային Ղարաբաղը:

- Հայերն ամէն դէպքում լաւատես եւ ճիշտ մտածող ժողովուրդ են: Մենք մտածում ենք եւ, կարծում ենք, ճիշտ ենք մտածում, որ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին վերջնական որոշման կարող ենք հասնել միայն խաղաղ բանակցութիւնների միջոցով: Այլ ուղի չկայ: Յանկացած ռազմական լուծում վերջնական չէ, ցանկացած պատերազմ մարդկային մեծ թուով կեանքերի կորուստ է՝ բոլոր կողմերից: Եթէ Հայաստանը



ճանաչէր Լեռնային Ղարաբաղը, ապա ինչ՞ի մասին էին յետոյ լինելու բանակցութիւնները: Բանակցութիւնների համար Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի ու Ատրպէյճանի համար ստեղծուել էին բոլոր պայմանները, խօսքը ԵԱՀԿ Մինսկի խմբի մասին է՝ իր երեք համանախագահներով: Կարծում ենք, աւելի լաւ տարբերակ մտածել հնարաւոր չէր: Այդ համանախագահներն են Ռուսաստանը, Ֆրանսիան եւ ԱՄՆ-ը: 1994 թուականի գինադադարին յաջորդած 26 տարիների ընթացքում բանակցութիւններ էին ընթանում: Չէի ասի, թէ դրանք անյաջող էին, քանի որ նման խնդրի լուծումն առհասարակ շատ բարդ է: Դրանում շատ նրբերանգներ, շատ տարրեր կան: Բանակցութիւնների ընթացքում որոշում են խնդրի շատ դէտալներ: Բանակցութիւնների աւելի քան 20 տարիների ընթացքում կողմերը հասել էին այնպիսի մակարդակի, երբ պէտք էր մտածել միայն փոխզիջումների ու քաղաքական որոշումների մասին: Այսինքն, պէտք էր քաղաքական կամք դրսեւորել եւ գնալ առաջ: Բանակցութիւնները չեղարկել միայն այն պատճառով, թէ դժգոհ ես ինչ-ինչ հարցերից, սխալ ուղի է, քանի որ ռազմական ճանապարհով խնդրի վերջնական լուծման որեւէ կերպ անհնար է հասնել: Կայ միայն մէկ ճանապարհ՝ բանակցութիւններ: Եւ դա ոչ միայն ԼՂ խնդրի, այլեւ ողջ աշխարհում տարբեր հակամարտութիւնների դէպքում է:

Հարց.- Ինչո՞ւ պատերազմը տեղի ունեցաւ թաւշայի յեղափոխութիւնից յետոյ, երբ Հայաստանում իշխանութեան եկան ժողովրդավարական ուժերը՝ Նիկոլ Փաշինեանի գլխավորութեամբ:

- Ձեզ կարծում, որ սա պէտք է կապել թաւշեայ յեղափոխութեան հետ: Հարցը կարելի էր այլ կերպ տալ, օրինակ՝ ինչո՞ւ սկսուեց 2020 թուականի Սեպտեմբերին: Գործօնները շատ են, քանի որ ԱՄՆ-ը զբաղուած է նախագահական ընտրութիւններով, աշխարհում կորոնավիրուսի համավարակ է, եւ բոլորը կուռն են այլ՝ առողջ ապահովման ճակատում, քանի որ այսօր թուրքիայի ազդեցութիւնն Ատրպէյճանի վրայ հակադրական է:

Ես այն մարդկանցից չեմ, ովքեր կարծում են, թէ քաղաքականութիւնը կամ քաղաքական կամ կոնֆլիկտային իրավիճակները պէտք է վերլուծել՝ հիմնուելով միայն անձնական յարաբերութիւնների կամ որոշակի անձանց ներդ-

րումի վրայ: Անկասկած, այս պատերազմին նախապատրաստուել են ոչ 2018 թուականից սկսած: Ակնյայտ է, որ դրան նախապատրաստուել են տարիներ շարունակ:

Հարց.- Իսկ գուցէ Հայաստանի ներքին իրադրութիւնը նոյնպէս փոխուել էր: Երկրում ինչքա՞ն ուժեղ են դարձել ազգայնական ուժերը:

- Նախ, ուզում են յստակ ասել, որ ես Հայաստանում չեմ տեսնում ազգայնական ուժեր: Ամէն բան կախուած է նրանից, թէ ինչ նկատի ունէք ազգայնական ուժ եւ ազգայնականութիւն ասելով: Կարծում ենք՝ դա պէտք է սահմանել հետեւեալ կերպ՝ կայ հայրենասիրութեան գաղափար, երբ մարդը սիրում է իր հայրենիքը, պատրաստ է անել հնարաւոր ամէն բան երկրի ապագայի համար՝ տնտեսական, քաղաքական ու ռազմական տեսանկիւնից: Հայերը, ոչ միայն Ղարաբաղում, այլեւ ողջ աշխարհում, հայրենասէրներ են: Ազգայնականութիւնը հայրենասիրութեան ինչ-որ մոտացված տարբերակն է, երբ կայ հայրենասիրութիւն առանց սթափ բանականութեան, տրամաբանութեան ու մարդկային արժէքների: Վստահ եմ, որ Հայաստանում այդպիսի ազգայնականութիւն չկայ: Հակառակը, հայերը հայրենասէրներ են:

Եթէ վերջին տարիներին Ատրպէյճանը միջադաւոր դրոշմներ էր ծախսում՝ գնելու գինամթերք, հայերը կառուցում էին Ղարաբաղում, վերականգնում էին ամէն ինչ՝ գիւղեր, դպրոցներ, հիւանդանոցներ եւ այլն: Հայերը մշտապէս եղել են հայրենասէր եւ կառուցող:

Հարց.- Յստակ մի օրինակ բերեմ: Հայաստանում «անմահների գնդի» քայլերին Դուք մասնակցում էիք՝ ձեռքում խորհրդային Միութեան հերոս, հետախոյզ Գեորգ Վարդանեանի նկարը: Նախկին ԽՍՀՄ մի շարք երկրներում վերջին տարիներին այդ քայլերը համարում են ռուսամետ ակցիայ: Հայաստանում եւ՞ս այս առումով վերաբերմունքը փոխուել է:

- Դուք ինքներդ այդ օրինակով փաստացի հաստատեցիք այն, ինչ ասացի ազգայնականութեան մասին: Այո, նախագահ դառնալուց յետոյ ես մասնակցում եմ այս ակցիաներին եւ չեմ նկատել, որ Երեւանում որեւէ բացասական բան տեսնեմ դրա մէջ: Հակառակը: Նախ եկէք իշխեք, որ Հայրենական Մեծ պատերազմին մեծ թուով հայերի էին մասնակցում՝ ընդհանուր հաշուով մօտ 600 հազար, Հայաստանից, Խորհրդային Միութեան

թեան միւս հանրապետութիւններէից եւ Սփիւռքից: Մենք կորցրեցինք 300 հազար հայ: Դա մեր համատեղ պատերազմն էր՝ ԽՍՀՄ միւս ժողովուրդների հետ, այս պարագայում ինչ ազգայնականութեան մասին կարող է խօսք լինել: Նախորդ երկու տարիներին ես մասնակցել եմ Գեորգ Վարդանեանի դիմանկարով, նա խորհրդային մեծ հետախոյզ էր, ում ինքս անձամբ շատ լաւ ճանաչել եմ: Գեորգ Վարդանեանի եւ Գոհար Լեւոնովնայի հետ ընկերութիւն էր անում իմ մայրը Թեհրանում՝ 1940-ականների սկզբին, իմ մայրը 16 տարեկանում ընկերների հետ ստեղծել էր մի կազմակերպութիւն, որը կոչուում էր «մշակույթ»: Դա պրո-խորհրդային կազմակերպութիւն էր, որը պատերազմի ժամանակ գումար էր հաւաքում եւ աջակցում Խորհրդային Միութեանը: Պատերազմի աւարտից յետոյ մայրս վերադարձավ Երեւան: Այսինքն, նա չէր մասնակցում պատերազմին, սակայն իր ներդրումն ունեցավ, ինչպէս եւ շատ ուրիշ հայեր: Յաջորդ տարի, մայիսի 9-ին ես կրկին լինելու եմ այդ գնդի հետ՝ պահելով երեք դիմանկար՝ Գեորգ Վարդանեանի, նրա կնոջ՝ Գոհար Լեւոնովնայի եւ նրանց ընկերոջ՝ իմ մօր նկարը, քանի որ, կարծում եմ, որ շատ հայերի նման իմ մայրն էլ մեծ ներդրում է ունեցել մեծ յաղթանակի կերտման մէջ:

Հարց.- Ինչպէս ասում են՝ մեծ խորհրդային մարդիկ ենք, իսկ հիմա ինչպիսի՞ն է Հայաստանի երիտասարդութեան վերաբերմունքը: Օրինակ, գիտեմ, որ Վրաստանում երիտասարդութիւնը փաստացի չի խօսում ռուսերէն:

- Ես չեմ կարող մեկնաբանել, թէ տարբեր երկրներում ինչ վերաբերմունք ունեն ռուսերէնի նկատմամբ, քանի որ մենք մուտք ենք գործել նոր աշխարհ, որը շատ աւելի անորոշ է, քան նախկինում: Այս աշխարհում շատ արժէքներ պէտք է վերաբեւորուեն: Աշխարհ, որտեղ պէտք է գտնես ինքդ քեզ, հասկանաս, թէ ուր է գնում համաշխարհային շարժումը, ու գալ ճիշտ եզրահանգման: Հայաստանում ռուսերէնը շատ լաճախակի է օգտագործուում: Կաբեյալին հեռուստատեսութիւնում, որին հետեւում է մարդկանց ճնշող մեծամասնութիւնը, բացարձակ գերիշխող են ռուսական հեռուստատալիքները: Անգամ արեւմտեան յետուստալիքները ռուսերէն են:

Հարց.- Նիկոլ Փաշինեանի իշխանութեան գալուց յետոյ Ռուսաստանում շատերը սկսեցին խօսել այն մասին, որ Հայաստանը բռնել է Ռուսաստանի հետ յարաբերութիւնները վատթարացնելու ուղղութիւնը՝ շրջուելով դէպի Արեւմուտք: Դուք դրա հետ համաձայն եք:

- Կրկին մենք գնում են միջազգային կամ երկկողմ յարաբերութիւնների անձնաւորման ճանապարհով: Ես հայ-ռուսական յարաբերութիւնները կը դիտարկէի աւելի խորը եւ հիմնարար տեսանկիւնից՝ շատ պարզ պատճառով. քաղաքական գործիչները գալիս են ու գնում: Ես ինքս ժամանակաւոր եմ՝ 7 տարի: Կարեւորն այն է, թէ ինչ ես դու աւելացնում այս յարաբերութիւններին կամ պակաս



# Խօսք, Միտում եւ Ընկալում

«Մարդիկ ամեն Զատ կը ստեն ընտրութիւնէ առաջ, պատերազմի ընթացքին եւ որսորդութիւնէ ետք:»

Օթթօ Ֆոն Պիզմարք

«Պատերազմի ընթացքին ճշմարտութիւնը այնքան յարգի է, որ մշտական հսկողութեան տակ պէտք է ըլլայ սուտերու փկնապահներով:»

Ուիլսոն Զրչիլ

## ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԻԹԵԱՆ

Արցախեան ազատամարտի զարգացումները կլանած են բոլորս: Վայրկեան-վայրկեանի կը սպասենք լուրերու եւ ամէն մէկ խօսք, որ կը հնչէ գլխաւոր մասնակիցներուն կողմէ, ըլլան անոնք հայ թէ օտար, չիւրային, բարեկամ թէ թշնամի, կ'ազդէ ամէն մէկուս մտայնութեան եւ հոգեվիճակին վրայ: Անկասկած, որ ճակատագրական օրեր կը բոլորենք ու հետեւաբար, խուսափելու համար ծայրայեղութիւններէ, պարտինք մեր կարելիութեանց սահմաններուն մէջ լաւագոյնս դատել արտասանուած խօսքերը, լաւագոյնս կուսելու համար արտասանողի միտքն ու միտումները եւ ըստ այնմ դիրքորոշուիլ:

Ուրեմն առնենք վերջին շաբթուան ընթացքին հնչած կարեւոր խօսքեր եւ փորձենք մեկնաբանել զանոնք, կարենալ գուշակելու համար, որ զարգացումները ի՞նչ ուղղութեամբ կ'ընթանան:

Սկսինք ներքին ճակատէն եւ առաջին հերթին վարչապետ Փաշինեանի այն յայտարարութեամբ, որ պատրաստ ենք «ցաւոտ փոխգիշուումներու, բայց ոչ անձնատուութեան հաշուոյն»: Իսկապէս որ այս խօսքերը շատ ծանր ազդեցին մեր վրայ եւ թողուցին այն սպաւորութիւնը, որ վիճակնիս լաւ է եւ կ'ընկալուին պատին հասած է: Կարողացած էինք, որ Ազերիները վերագրուած են Արցախի արեւելեան եւ հարաւային ճակատին տարիներով մեր հսկողութեան տակ գտնուող հինգ շրջաններէն չորսը, ու վարչապետի այս խօսքը հաւանաբար արդիւնք էր այդ կորուստին: Բայց արդեօ՞ք իրավիճակը այդքան ծանր է: Հաւանական է՞, որ ասիկա նաեւ մարտակոչ մըն էր ուղղուած թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին լսարաններուն: Ներքինին՝ ուժերու գերլարումով մարտնչելու, որ չհասնինք այդ աստիճանին: Արտաքինին՞ որ կարմիր գիծ մը ունինք եւ պատրաստ ենք բռնու պայքարի, չհասնելու համար հոն: Վարչապետի յետագայ յայտարարութիւնը, որ «Արցախի Պաշտպանութեան բանակի առջեւ դրուած է խորտակիչ հակահարուածի ճիշտ պահն ընտրելու եւ իրականացնելու խնդիր», յուսադրեց մեզ, որ տակաւին կարողութիւնը ունինք խորտակիչ հակահարուած հասցնելու թշնամիին:

Նոյնպիսի հոգեվիճակի մատնուեցանք լսելով Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեանի Շուշիէն արձակած կոչը, որ թշնամին միայն 5 քլմ. անդին է: Չորս օրեր անցած են այդ յայտարարութիւնէն ու հակառակ շարունակուող անմարդկային ուժեղացումներու, թշնամին հինգ քլմ. եւ աւելի անդին է: Այդ փաստը որոշ չափով կը թեթեւացնէ յուսախաբութիւն առթող մեր անմիջական զգացումները, յիշեցնելով Արցախեան առաջին ազատամարտի թե՛ օրերուն վազդէն Սարգսեանի կոչը՝ Հայաստանի տարբեր մարզերէն «Մահապարտներու կամաւորական խումբ մը կազմելու եւ ուղղուելու Արցախ: 1992-ին արձակ-

ուած այդ կոչը բեկումնային ազդեցութիւն ունեցաւ ազատամարտի ընթացքին վրայ, ճամբան բանալով յաղթարշաւներու: Յոյսով ենք, որ նախագահի կոչն ալ ճամբան կը բանայ նոր յաղթարշաւներու: Այդ յուսադրումը կ'ունենանք, լսելով Հայաստանի Պաշտպանութեան նախարարութեան բանբեր՝ Արծրուն Յովհաննիսեանի յայտարարութիւնը, որ, հրադարձի գնալը քաղաքական հարց է, բայց մեր ռազմական պլաններում այս վիճակին համակերպող չկայ: Մեր պլաններում այլ գործողութիւններ են, այլ բնույթի եւ այլ տարած քիւն:

Ռազմաճակատի աննպաստ լուրերէն աւելի, մեզ մտահոգողը ներքին ճակատէն եկող յայտարարութիւններն են, ըլլան անոնք 14 կուսակցութիւններու կոչը եւ կամ վազդէն Մանուկեան, Հրանտ Բագրատեան եւ Դաւիթ Շահնազարեան եռուեակի կոչը ուղղուած Փաշինեանին, իշխանութիւնը յանձնելու բանակին: Այս պայմաններուն տակ, այսպիսի կոչ ընելը մեծապէս վնասակար կը գտնենք: Նախ, որ քաղաքական եւ գիտութեան ուժերու մեկտեղումը մեզ աւելի խոցելի կը դարձնէ, մեզ գրկելով հնարքային (maneuver) կարելիութիւններէ: Երկրորդ եւ աւելի կարեւորը, իր ժխտական ազդեցութիւնը կ'ունենայ մեր բանակի եւ թիկունքի հոգեվիճակին վրայ: Չարմանալի գուզադիպութեամբ, 100 տարիներ առաջ այս օրերուն էր, որ յանձնեցինք կարսը, առանց փամփուշտ արձակելու: Խօսքը տանք Հայաստանի Ա. Հանրապետութեան Ա. Վարչապետ՝ Յովհաննէս Քաջագնունիին. «Մեր բանակը, որ կուշտ էր, լաւ գիտուած ու լաւ հազմուած, չկուռեց. գործերը շարունակ նահանջում էին կամ դիրքերը լքում, զէնքերը թափում ու ցրում գիւղերը: Բանակը բարոյալքուած էր: Բանակի դաստիարակութիւնը, ռազմական ոգին, կուռ կազմակերպութիւնն ու կարգապահութիւնը - ուրեմն եւ ընդդիմադրական ուժը - թուլացած էին ծայր աստիճանի»: Այսօր Շուշին սպառնալիքի տակ է,

ինչպէս կարսը հարիւրամեակ մը առաջ: Պատմութիւնը պէտք է կրկնուի:

Անցնելով արտաքին ճակատին, սկսինք Ազրպէյճանին պատերազմի մղող թուրքիայէն: Յիշեցնենք, որ երբ թուրքիոյ առջեւ փակուեցան Եւրոպայի դռները, ան թեքուեցաւ Արեւելք եւ նախնական որոշ յաջողութիւններէ ետք հոն ալ տեղափոխուեցաւ: Նոյնը պատահեցաւ Միջերկրական ծովու իր արկածախնդրութեան: Ուղղութիւն փոխելով, հիմա ան կը փորձէ Ազրպէյճանի վրայով դէպի Կովկաս եւ Միջին Ասիա ներթափանցել: Ազերի-թրքական հաշիւներով, շաբաթէ մը պիտի կարենային մեծ յաջողութեանց հասնիլ, բայց բախեցան հայկական հերոսական դիմադրութեան: Պատերազմի սկիզբներուն ինքզինք Միւսկի երեք համանախագահներուն որպէս չորրորդ հաւակնող թուրքիան, ա'լ նոյն դիրքէն չիօսիր: Այս կ'ըսենք, նկատի ունենալով նախագահ թրամբի ազգային անվտանգութեան հարցերով խորհրդակցան Ռապըթ Օ'Պրայընի Հոկտեմբեր 30-ին կատարած յայտարարութիւնը Լոս Անճելըսի մէջ, որ «թրքական ցանկացած միջնորդութիւն կամ խաղաղապահ դերակատարում մատնուած է անյաջողութեան ԱՄՆ-ի, ինչպէս նաեւ Հայաստանի համար: Մենք կը հաւատանք, որ երկու կողմերը կ'ընդունին սքանտինալեան խաղաղապահներուն, եւ մենք կ'աշխատինք այդ կառավարութիւններուն հետ՝ ուժեր հաւաքելու եւ տարածաշրջանին մէջ հրադադարը պահպանելու համար:»

«Անարիւն գոհ»: Բանաստեղծը չուգեց, որ իր աղաչանքները աննկատ մնան: Վերինէն խնդրեց. «Մի լիցի ինձ երկնէլ, եւ ոչ ծնանել... Ամպել, եւ ոչ անձրեւել... Ընթանալ եւ ոչ հասանել... Ձոհել, եւ ոչ ձենձերել»:

Դարերը պահանջեցին նոր գոհեր, եւ անոնցմէ փայտան նոր բառեր, հնարաւորութիւն տալով մեզի, որ մեր հիներէն աւելի լաւ ընկալենք «գոհ»ի գաղափարը: Ահա այդ բառերը. (Յարգելի ընթերցող, քիչ չեն այդ բառերը, ամէն բառի ստուերի մէջ գոհուածի մը ոգին մեզ կը դիտէ, ամէն մէկ բառ մեր պատմութեան մուտք ու պայծառ մէկ էջն է, ուստի զգուշութեամբ կարդանք բոլորը, ցուցաբերելով համապատասխան երկիւղածութիւնը)՝ գոհաբերել, գոհաբերութիւն, գոհաբերում, գոհագործում, գոհամատուցում, գոհանուէր, գոհասեղան, գոհավայր, գոհաստու, գոհաստուն, գոհարան, գոհողութիւն, անձնագոհ, անձնագոհութիւն, անձնագոհաբար... Համառօտ հայոց պատմութիւն: Բառը նաեւ յաջողեցաւ տեղանուն դառնալ. «Ձոհա-



սար», Արագածի հիւսիսային լանջին հանգած հրաբուխ: Աշխարհի վրայ չկայ մէկ այլ լեզու, որ ունի «գոհ» արմատով շինուած այնքան բարդ բառ, որ քան հայերէնը՝ բոլորը մեծ գոհողութիւններով ձեռք բերուած, ինչպէս գիտէք:

Դարերու ընթացքին «գոհ» բառով յղացանք բազմաթիւ արտայայտութիւններ, քանի որ հայը ստրված էր՝ «Ձոռ բերել», «Ձոռ երթալ», «Ձոռ տալ», «Ձոհաբեր ըլլալ», «Ձոհուիլ յանուն խաչի, նպատակի, կամ՝ հայրենիքի»: Այդ բառը յարմար եկաւ, որ Նար-Դոսը «Սպանուած աղաւնին» վէպի մէջ կեանքի իր հայեացքները արտայայտէ. «Յիմարներ եմ համարում առհասարակ այն մարդկանց, որոնք

# Յանուն Սիրոյ, Խաղաղութան, Յարատեւութան՝ Ռազմաճակատէն Հարսանիք, Հարսանիքէն Ռազմաճակատ



## ԼԻԼԻԹ ՀԱՆՁԻ ՊՕՂՈՍԵԱՆ

«Հարսանիք լեռներում» 2020-ը աւելի խրոխտ պատմեց միջազգային հանրութեանը Արցախի, արցախցո՝ վիրաւոր սրտով սիրով ու գէնքով մաքաւելու սրբազան ուխտի մասին: Օրեր առաջ հրետակոծուած Շուշուայ Սբ. Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցում Տէր Անդրէաս քահանայ թաւաղեանի թեթեւ ձեռքով ղողանջեցին աւետիսի զանգերը՝ ազդարարելով մեկամեայ պատերազմի ընթացում առաջին պատկազրութեան սկիզբը: Ծննդով արցախցի հարսն ու փեսան Մարիամն ու Յովհաննէսը, հրետակոծութիւնների ու մահուան վտանգն արհամարհելով՝ մի կողմ թողեցին պատերազմի վախերն ու ընտանիք կազմելու համար միմեանց ընդառաջ եկան: Եկան ասելու աշխարհին, որ ուզում են Արցախում ապրել խաղաղ, ուզում են սիրել, ուզում են շատ զաւակներ ունենալ...:

Նրանք մեզ յայտարարեցին պատերազմ, մենք պատասխանում ենք հարսանիքով

«Աշխարհին ուղղուած մեր կոչն այս է՝ պէ՛տք է լուեն այդ հրանոթները, եւ Արցախը պէ՛տք է վերադառնայ իր սովորական կեանքին:

Մենք ուզում էինք, որ Շուշուի Ղազանչեցոցում կատարուէր մեր պատկազրութիւնը, որ պէսզգի աշխարհը տեսնի՝ որքան էլ ռմբակոծեն եկեղեցիները, որքան էլ փորձեն աւերել մեր Արցախը՝ մենք կանգուն ենք: Որքան ընտանիքներ կարող էին ստեղծուել յայ մէկ ամսուայ ընթացքում, որ չստեղծուեցին: Մեր կոչն ուղղուած է ոչ միայն աշխարհին, այլեւ մեր երիտասարդներին: Մենք արդէն 900-ից աւելի գոհ ունենք: Մենք պէ՛տք է այդ դատարկուող շարքերը համալրենք:

Այս մի քանի օրուայ մէջ մենք այնքան շնորհաւորանքներ ենք ստացել եւ առաջին եւ հիմնականում կրկնուող շնորհաւորանքն այն է, որ մեր պատկազրութիւնը խաղաղութիւն բերի Արցախին: Կարծում եմ՝ սա ոչ միայն արցախցիների, այլեւ բոլորիս երազանքն է», մեզ հետ գրուցում պատմում է աշխարհում խաղաղութեան խորհրդանիշ դարձած Արցախի հարսը՝ Մարիամը:

-Մարիա՛մ, նախապէս ծրագրե՞լ էինք հարսանիքը:

«Պատկազրութեան օրը վաղուց էինք որոշել, պարզապէս չգիտէինք մինչեւ Հոկտեմբերի 24-ը կը տեւէ՞ր

պատերազմը, թէ՞ չէ: Սեպտեմբերի 27-ից յետոյ Յովհաննէսը ռազմաճակատում էր, եւ ես նրան մինչեւ ամուսնութեան օրը չեմ տեսել: Ընթացքում խօսում էինք ու մեր պատկազրութիւնն էինք քննարկում՝ ի՞նչ է լինելու. արդեօք մինչեւ Հոկտեմբերի 24-ը պատերազմը աւարտուած կը լինի՞, թէ՞ չէ: Երբ արդէն ռմբակոծեցին Շուշուն, մենք առաւելեւ վստահ էինք, որ հէնց Շուշուում պէտք է տեղի ունենայ մեր պատկազրութիւնը: Այդպէս էլ եղաւ: Ուզում եմ ասել, որ որքան էլ փորձեն մեր վանքերն աւերել, միեւնոյնն է, մեր հոգեւոր մշակոյթը մեզ հետ է:

Ինձ համար կարեւոր էր նաեւ պատկազրութեանը ազգային տարագով ներկայանալ, որ պէսզգի աշխարհն ու մարդիկ հասկանան, որ որքան էլ փորձում են մեզ կոտորել՝ մենք կոտորուողը չենք, եւ մեր արմատները շատ խորն են, իսկ ճիւղերը դեռ ծաղկելու են:

Մարիամի գրուցին միանում է Արցախի փեսան՝ գինուորական հագուստով, ազնիւ կեցուածքով Յովհաննէսը.

«Հարսանիքի օրը նախապէս ծրագրուած էր եւ մեզ մնում էր միայն եկեղեցու սպասաւորի հետ վերստին յատկեցնել, որ անկախ պատերազմից՝ մեր հարսանիքը տեղի է ունենալու: Պէտք էր կազմակերպել, որ հարսն ու փեսան անվտանգ հասնեն Շուշու:

Այդ պատասխանատու աշխատանքն իր վրայ վերցրեց մեր լաւ ընկեր Արա Մելիքեանը, իսկ եկեղեցու քահանայ սպասաւոր Տէր Անդրէասը, իր բազմաթիւ յորդորներից յետոյ, չկարողացաւ մեզ հակառակը համոզել, որ արարողութիւնը տեղափոխենք այլ եկեղեցի (Ղազանչեցոց ռումբերից աւերուել էր եւ անվտանգ չէր): Մենք պնդեցինք, որ մեր պատկազրութիւնը լինի Ղազանչեցոցում եւ վստահ էինք, որ այդ հանգամանքն առաւել խօսուն կը լինի: Ինչպէս Մարիամն արդէն նշեց՝ որքան էլ փորձեն մեզ կոտորել, մեր մարդկային արժէքները վնասել, միեւնոյնն է, յանձնուողը չենք եւ պայքարելու ենք խաղաղութեան համար, պայքարելու ենք կեանքի համար, պայքարելու ենք սիրոյ համար, ինչը միշտ հայ ազգը արել է իր ողջ գոյութեան ընթացքում»:

-Յովհաննէ՛ս, ռազմաճակատից հարսանի՞ք...

-Իրականում այդ նոյն ճանա-



# Յաղթանակի Վկայութեամբ Քաջարի Հայորդիք Կը Կռուին Հայրենիքին Համար Ձոհուելով

«Երկու եղբայրներս ճակատ մեկնեցան, երկուսն էլ զոհուեցան: Միս յուղարկաւորեցինք, միւսը մնում է անյայտ»

ԱՐՅԱԽՅԻ ՏԻԿԻՆԸ

ԴՈԿՏ. ԶԱԻԵՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒ-ՄԱՆԵԱՆ

## Վկայուհի Տիկինը

Ահարկու պատերազմը ընդ-դէմ Արցախի Հանրապետութեան գրաւած է բոլորիս միտքն ու սիրտը: Ամէն վայրկեան աւելի լաւ լուրեր ակնկալելու մեր իղձը կը մնայ ինքն իր մէջ: Կը դիտէի տեսաերիզ մը եւ պատահամբ երիտասարդ կնոջ այս վկայութիւնը լսեցի խոր յուզումով, հագիւ քառասնամեայ, գեղադէմ սեւաչեւայ, որուն երկու եղբայրները ճակատ մեկնած էին, երկուքն ալ զոհուած, մէկուն յուղարկաւորութիւնը կատարուած, եւ միւսը՝ տակաւին անյայտ:

Միտքն այս կինը չէր լար, չէր ողբար: Արդէն լացեր էր քանի՛ անգամ: Գոնէ տեսաերիզը դիտողը չէր տեսներ իր ողբալը: Փոխարէն կը կրկնէր «էստեղից ոչ ոք չի հեռանայ: Մնում ենք էստեղ»:

## Մտահոգ եւ Յուզումնալից

Կը դիտէի նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին դէմքը իր սրտառուչ ուղեւորին միջոցաւ: Այս անգամ պիտի համարձակիմ ըսել գրեթէ յուսահատ: Դէմքն ու խօսքը զիրար կը լրացնէին ներքին յուզումով եւ անպայման ներքին բնագոյնին վախով թէ ո՛ր պիտի հասնի հայուն ճակատագիրը: Կը դիտէի նաեւ մեր պատասխանատու պետական անձանց՝ Հայաստանի Վարչապետին ու Արցախի Նախագահին՝ իրենց հարցազրոյցի պահուն: Անոնց եւս այս անգամ կը յամենար վստահութիւնն ու անվախութիւնը իմ վարանոտ աչքերուս դիմաց: Գիտէի վտանգին մշտական ներկայութիւնը անարկու եւ անդադրում ու մեղադրումներովը ու կը գիտակցէի թէ որքան պատասխանատու դիրքերու վրայ կը գտնուէին: Երեքին դէմքերը նոյնը՝ եւ սակայն արայայտութիւնը բացառապէս մտահոգիչ:

## Շուշիի Ս. Ամենափրկիչ Մայր Եկեղեցին

Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Մայր Եկեղեցւոյ ումբակոծումը փշաքաղեց բոլորս: Մանաւանդ երբ տեսանք թեմակալ Առաջնորդին քար ու քանդ եկեղեցւոյ Սուրբ Խորանին առջեւ արտասանած սրտաճմրկ աղօթքը: Մեր սիրելի Սրբազանը թաց աչքերով կ'աղօթէր անաւոր այդ իրողութեան դիմաց գոր երբէ՛ք պիտի չտեսներ իր քաջարթուն համոզումով: Երբէ՛ք: Զինք մօտէն ծանօթանալուս կրնամ հաստատել իմ ըսածները: Սակայն տեսէք ինչ կ'ըսէր սեւաչեւայ սիրուն այդ երիտասարդ տիկինը, երբ փոխանակ ողբալու իր երկու եղբայրներուն նահատակութեան վրայ, պիտի մնանք այստեղ կ'ըսէր ու կը հաստատուէր որպէս մխիթարութիւն:

Տիկնոջ օրինակը մէկն է բոլոր միւսներէն որոնք եւս մեծագոյն կորուստներ արձանագրեցին՝ յուսալից յաղթանակի վաղորդացնը

հիւսելով: Ինչ քաջութիւն եւ ո՛րքան համբերութիւն: Թշնամին հոն է եւ պիտի մնայ հոն տակաւին: Հայուն փրկութիւնը թշնամիին ձեռքը չէ: Վկայ մերօրեայ նահատակները՝ հարիւրներով: Ափսոս, անոնք պիտի կերտէին հայուն մնացորդացը ու հազարներով բազմացնէին Արցախի հայութիւնը հարիւրաւոր սերունդներու ճամբով: Եթէ այս ցեղասպանութիւն չէ, ուրեմն ինչ կրնայ ըլլալ: Ճիշդ է պատերազմի արդիւնք է, եւ սակայն ինչո՞ւ պատերազմի էրբ ի վերուստ ապրելու շնորհքն ու իրաւունքը տրուած են մարդկութեան:

## Ոմբակոծում եւ Քաջարի Դիմադրութիւն

Կը մտածեմ երբեմն արդե֞ք հայերս ալ սխալներ գործեցինք երեսուն տարի առաջ աւելի ընդունելի միջին ճամբայ մը չգտնելով: Սակայն ո՞րն է այդ միջին ճամբան երբ Արցախ Նահանգը հինաւուրց դարերով նուիրական դարձած իր Գանձասար, Ամարաս ու Ամենափրկիչ հնագոյն վանքերովն ու եկեղեցիներով կանգուն՝ կը հանդիսանան Աստուածապարգեւ վկայութիւնները Արցախի նահանգին: Հայոց դարերու պատմութիւնը ոտնակոխ ընել հարիւրամեայ կոպիտ սխալի մը հաշտոյն ո՛րքան արդարանալի կրնայ ըլլալ: Այո՛, միայն դասապարելի կ'ըլլայ եւ աղիտաբեր ինչպէս եղաւ սա մեր օրերուն:

Այս վերջին ժամերուն կրկին կը խօսուի անորոշ հրադադարի մը մասին, բանակցութիւնները վերսկսելու մասին, եւ սակայն պայմաններ կ'առաջարկուին որոնց գլուխն է անուղիղ եւ պառակտիչ անձնատուութիւնը Արցախի Հանրապետութեան: Ո՞վ որմէ առած է, եւ որո՞ւն պիտի տայ: Աստուածապարգեւ Արցախը մէկ անգամ տրուած է, եւ տրուած արցախցի հայուն: Պատմութիւնը շատ հին է, վկայութիւններով եւ յուշարձաններով հարուստ: Թուրքերո՞ւն մնաց ճշդումը կատարել:

## Երրորդ Փորձը՝ Ամերիկայէն

Պայթուցիկ կացութիւնը տեղական չէ միայն, այլ շրջանային եւ համաշխարհային: Ռուսիոյ Դաշնութեան միջնորդած հրադադարի երկու նիւար փորձերը չիրագործուեցան, եւ այս անգամ Միացեալ Նահանգաց Ամերիկայի մեր մեծարգոյ Նախագահը, ժամանակը շատ յարմար տեսնելով, Նախագահական ընտրութեան յառաջիկայ երեքշաբթի օրը, լիաշուրթն գովասանքով եւ վերջին վայրկեանի հաւաստումներով «ուրախ լուրեր» արձակեց, մինչ սա վայրկեանիս անդին ահռելի պատերազմը կը կործանէ Արցախն ու մեր ժողովուրդը, «Դուք կարո՞ղ էք ինձ հաւատալ» տարօրինակ եզրաբանութեամբ: Այս պարագային հաւատալն ու չհաւատալը գիրար կ'արժեն:

Նախագահ Թրամը անցեալ Կիրակի Նիւ Հեմփշըրի մէջ կ'ըսէր, «Այստեղ ներկայ է Հայաստանը: Նայեցէք հայերուն սքանչելի մարդիկ են՝ կատաղի կուռուղիներ: Անոնք դժուար օրեր կ'ապրին այս օրերուն, մահեր ունին եւ մարտեր կը



մղեն: Այդ ամբողջը կը կարգադրուին: Ըսէ՛ք ձեր ժողովուրդին որ հարցերը հեշտ կը լուծուին եթէ գիտես ընելիքը: Դուք կարո՞ղ էք ինձ հաւատալ»: Անշուշտ Հայաստանն ու Արցախը գոհունակութեամբ պիտի հաւատան Նախագահին եթէ իր միջնորդած կամ հրահանգած հրադադարն ու պատերազմի վերջը տեսնենք ա՛յս շաբթուն, երեքշաբթի օրուան նախագահական ընտրութեանն առաջ: Անկէ ետք ակնկալելիք ոչինչ պիտի ունենանք, որուն փոխարէն պիտի հաւատանք ու կրկնենք արցախցի սիրուն տիկնոջ հաւատքը՝ «էստեղից ոչ ոք չի հեռանայ: Մնում ենք էստեղ»:

## Զինուորներ Կը Սկստուին


Մայր Աթոռէն խումբ մը հոգեւորականներ ճակատ մեկնեցան խրախուսելու երիտասարդ զի-

նուորները: Անոնցմէ անոնք որոնք չէին մկրտուած, ուղարկուած էին վրայ ստացան Մկրտութեան եւ Դրոշմի Խորհուրդները՝ ձեռամբ Ամենայն Հայոց Հայրապետին կողմէ ուղարկուած հոգեւորականներուն: Հոս կը հանդիսաւորուի մեր այս օրերուն մեր երիտասարդներուն գոհաբերութեան գերագոյն նշանը՝ Քրիստոսով յաղթելու: Սրբալոյս Միւռոնը իրենց ճակտին բոլորը միասին պիտի դիմաւորեն յաղթանակը որուն համար իրենց զոհուած զինակիցները արեամբ մկրտուեցան վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց: Հարազատ կրկնօրինակը կ'ապրի հայ ժողովուրդը հնագոյն վարդանանց եւ մօտաւոր անցեալի Սարդարապատի գոյամարտերուն, նորագոյն Արցախեան այս գոյամարտով:

Տէ՛ր ՌԻՂՆԵ՛Ա ԶԳԵԱՅՍ ՄԵՐ Ի ՃԱՆԱՊԱՐՀՍ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ:

# VA Print Media


Book Printing • Hard Covers • Year Books  
Restoration of Old Books & Bibles



Հետաքրքրուած ենք իրենց փոխարժեքով ստանալ՝

- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Ցեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք եման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել Հեռաձայնելով՝ ՎԱՀԻ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ:



Նոր Գիրքերու  
Տպագրութեան  
եւ Հին Գիրքերու  
Նորոգութեան

**Vahe Atchabahian**  
2004 E. Washington Blvd. • Pasadena, CA 91104  
**Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924**  
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com



# STOP FALSE ACCUSATIONS STOP SPREADING FALSE INFORMATION

**Piknik** cheese made by **Nordex Food** is a private and family-owned company. The founders and the owners are 100% Danish. **NO DONATIONS ARE MADE TO ANY COUNTRY WHAT SO EVER.** Legal action will be taken against any company or individual who spreads the false accusations.

## ԴԱԴՐԵՑՈՒՑԷՔ ԱՆՅԻՄ ՉՐՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԱԴՐԵՑՈՒՑԷՔ ՍՈՒՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՓՈԽԱՆՑԵԼԸ

«Փիքնիք» պանիրը պատրաստուած է «Նորտեքս Ֆուդ»ի կողմէ, որ անձնական ընտանեկան ընկերութիւն մըն է: Հիմնադիրները և տերերը 100 տոկոսով դանիացի (Danish) են:

ՈՐԵՒԷ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ, ՈՐԵՒԷ ԵՐԿՐԻ ՉԵՆ ԿԱՏԱՐՈՒԱԾ:  
**ՕՐԻՆԱԿԱՆ-ԴԱՏԱԿԱՆ ԲԱՅԼԵՐ ՊԻՏԻ ԱՌՆՈՒԻՆ ՈՐԵՒԷ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՍ ՈՒԷՒ ԱՆՋԱՏԻ ԴԵՍ, ՈՐ ԿԸ ՏԱՐԱԾԷ ԱՆՅԻՄ ՉՐՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ:**



Dear customer,

NORDEX FOOD is a privately owned Danish company with production and sales of white cheese to the whole world.

The PIKNIK/Sütdiyari/Dairyland White Cheese is produced at our dairy in Austria with Austrian milk.

NORDEX FOOD do not support any political agenda in any country.

Best regards  
NORDEX FOOD A/S

  
Martin Pedersen, CEO





# Պատմական Տեղեկանք Վաղենի Ժամանակներից Մինչև Նոր դարեր Արցախ Աշխարհի (Լեռնային Ղարաբաղ) Մասին

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

*Այս տեղեկանքի տուեալները քաղել են Հայաստանի, Գիտությունների Կաճառի հրատարակած նիւթերից:*

Աշխարհի բաժանում, ուժեղներ իրենց երկրների աշխարհագրական տարածքներում ընդգրկել էին նաև բնիկ ժողովուրդների բնակեցրած տարածքներ: Ներկայ դարում դեռևս նման պետական կազմավորումներ կան՝ Հիւսիսային Կորէա-Հարաւային Կորէա, Անգլիա-Սկոտլանդ, Իսրայել-Պաղեստին, Իսպանիա-Կատալոնիա: Քսան ու քսանմէկերորդ դարերում նոյն պետութեան տիրող ու բնիկ ժողովուրդների ինքնորոշուելու կոչու եղաւ՝ Հարաւային Սուտան □ Հիւսիսային Սուտան, Վրաստան- Աբխազիա ու Օսէթիա, Եթովպիա-Էրիթրէա, Քոսովո-Սերբիա: Եւ վերջապէս, շատ առաւել մեծամասնութեամբ Հայերով բնակեցուած, Արցախ-Ղարաբաղ երկրամասը Ատրպէյճանից ինքնորոշուելու համար՝ չորս անգամ իշխող Թուրքի ու Հայի միջեւ ահաւոր կռիւ, պատերազմ, մարդկային ու նիւթական կորուստներ: Հիմա դեռ կռիւ է աչնտեղ, բնիկ հայեր «Յաղթելու ենք» վանկարկում, աշխարհի միլիոն-միլիոն հայերի սիրտը, ոգին, հոգին նրանց հետ է, Հայու գոյամարդի կռիւն է, Հայ տեսակի կռիւն է, յաղթելու է Արցախը, յաղթելու է, Հայու գոյատեւելու վերջին կռիւը, յաղթելու են հայերը... աշխարհի հայերը խօսքով, դրամով, նիւթական զանազան օժանդակութիւններով սատար եղան Արցախին: Աշխարհի փողոցների խաղաղ ցոյցերով բողոքի ելան, կռուի ճակատ գնացին կամաւոր տղաներ, նրանց արիւթեամբ աշխարհ գարմացաւ, հիացաւ, աշխարհ ապշեց հայու կռուի ոգու արիւթեամբ, յաղթանակի կամքի ոգիով: Ափսոս, գոհուեցին վարդի նման բացուած ԱՐ, Արմին-Հայ ցեղի Հայկ Նահապետի տղաներ: Եւրոպական քաղաքակիրթ հզոր երկրներ Ֆրանսա ու Գերմանիա ինչպէս համաձայնեցին հանքային հարուստ պաշարներով Ալգաս Լորէն երկրամասը համարել Ֆրանսիայի կազմում, ինչպէ՛ս կարգաւորուեցին Գերմանիա-Լեհաստան, Գերմանիա-Չեխոսլովակիա, Ուքրանիա-Լեհաստան երկրների սահմանները, Խրիմ երկրամասի բացարձակ մեծամասնութեամբ Ռուս ազգի բնակչութեան մարդիկ հանրաքուէով որոշեցին իրանալ մայր երկրին... Եւ միացան: Ազգութեամբ Ուկրանեացի իՍՉՄ-ի առաջնորդը Խրիմի երկրամասը նուիրել էր Ուկրանիային, հողը նուիրում են, տեսաք թէ ինչ պատահեց...: Հայու դուշմանը ուրիշ է...:

ԻՍՉՄ առաջին ու վերջին ապիկար նախագահ Գորբաշով, իր համախոհներով հայերի պատուիրակութեան հետ հանդիպման ատեն յայտարարել էին, պատմութեամբ տարածքային հարց չեն լուծում: Հիմա զզջացել է...: Հարիւր եւ աւելի տարիներ անց Ամերիկայի Միացեալ Նահանգների պաշտօնաւորող Պետական Քարտուղար՝ Փոմփէօ յայտարարել՝ «Կը նստին բանակցային սեղանի շուրջ՝ փորձելով հասկանալ այդ իսկապէս պատմական եւ բարդ խնդիրներու շարքը: Ղարաբաղի հակամարտութիւնը պատմական եւ բարդ խնդիր է»:

Քարտուղարը յայտարարել այդ

«էդ Ո՛ւմ Վրայ էք թուր հանել: Հայոց Սեծ Ազգին Չէ՛ք ճանաչում»: Վերք Հայաստանի - Յերոսավէպ - Խաչատուր Արովեան

կռիւ, պատերազմ չէ, հանցագործութիւն է: Կարծում ենք պետական քարտուղարի խօսքը անշուշտ նաեւ իր խօսքն է:

Թուրք Օղուզ ցեղ իրենց ոչխարների հօտերով հասել հարաւ կովկասի տարածքներ, յայտարարել, որ որտեղ իրենց ոչխարհների արածում, այն իրենց երկրի տարածքն է: Պարսկաստանի տիրած Մարերի երկիր Մարաստան էր այն: Քաջ գինուոր ու զօրավար Մակեդոնացի Աղեքսանդր մեծ, աշխարհը նուաճելու համար կռիւ արել Պարսկաստանի հետ, նուաճել այն, հասել Հնդկի ցեղի երկիր: Զինուորները կռուից յոգնել էին, մերժել շարունակել իրենց կռուի երթը: Մարաստանի Ատրպատէս անունով մի իշխան Աղեքսանդր Մեծի մի զօրավարի հետ համաձայնել տիրելու այդ տարածքին: Պարթեւներ նուաճել էին այն, Ատրպատէս անունի հնչիւնափոխութեամբ այն անուանել Ատրպատական: Յետագային, այդ Ատրպատական երկրամասը Պարսկաստանի ու այն նուաճած արաբների լեզուների հնչիւնափոխութեամբ յետագային դարձել նաեւ Ատրպէյջան: Ռուսի մի քանի ուսմբի հարուածով իրենց երկրում նոր կարգեր, նոր իշխանութիւն եղաւ, երկրներ-երկրամասեր իրենց միացրեցին, կայսրութիւն եղաւ, միացրեցին նաեւ Անդրկովկաս, Ժողով արին Թուրքի հետ, բարեկամ հռչակեցին նրան, Վրաստան ընդարձակեցին, Ատրպատական-Ատրպէյջանում պետութիւն, Օղուզ Թուրքերի պետութիւն ստեղծեցին, նրան միացրեցին հայերով բնակեցուած բազմաթիւ աւաններ, Արցախ-Ղարաբաղ երկրամաս:

Լեռնային Ղարաբաղի, Արցախի ինքնավար Հանրապետութիւն, կը ջանամ նրա մասին պատմական տեղեկութիւններ շարադրել: Աշխարհագրական անուանակարգութեամբ Արցախի ինքնավար երկրամասը բաղկացած էր, ու բաղկացած է, հինգ շրջաններից՝ Հաղարութ, Մարտակերտ, Մարտունի, Ասկէրան, Շուշի: Նրա տարածքը, 1988 թուականին 4,4 հազար քառակուսի քիլոմէթ էր: Նրա բնակչութիւնը 1979 թուականի տուեալներով 162,2 հազար էր, որից հայեր 123,1:

Արցախ երկրամասը իր բազմադարեան պատմական ժամանակաշրջանի ընթացքում հանդէս եկել տարբեր անուանումներով: Ատրեաստանի արքաների արձանագրութիւններում Արմինա երկիրը, կրակ իմաստով, Ուրարտու էին անուանել: Արմինա-Ուրարտական պետութեան կաւէ սալիկների արձանագրութիւններում այն կոչուել՝ Ուրտեխէ-Ուրտէխիսի: Այդ անուանումով է, որ նրա աւանդական հայկական անունը հնչիւնափոխուելով ԱՐՅԱՆ կոչուել:

Յունական անտիկ դասական հեղինակներ (Ստրաբոն-Աշխարհագրութիւն) երկրամասը անուանել էին Օրխիստենա, որը նաեւ ժամանակի ընթացքում հնչիւնափոխուելով արտացոլել Հայերէն ԱՐՅԱՆ անունը: Վաղ միջնադարի աղբիւրներ երկրամասը անուանել էին եւս երկու տարբեր անուններով՝ Յաւղէկ եւ Խաչէն, (խաչ), որը ծառաւել է որպէս հայկական Առանշահիկ իշխանների նստավայր: Տասը-տասներեք դարե-

րում, Խաչէն անունը մեծ ժողովրդականութիւն է վայելել: Այն ոչ միայն մարմնաւորել էր Արցախի բազմահազար յուշարձանները, այլ նաեւ Բիւզանդական ու պարսկական անուանակարգութիւններ: Անհրաժեշտ է ընդգծել նաեւ, որ երկրամասում գտնուող ամրոցը նաեւ կոչուել Խաչէն, քանի որ նրա բնակիչները հայեր էին եղել: Ուղղափառ Քրիստոնէական աշխարհում (Բիւզանդիա, Վրաստան, Ռուսաստան) հայերին անուանել էին՝ «Խաչեցարամի» համապատասխան Հայերէն «խաչ» սկզբնաբառով: Տարբեր հեղինակների աշխատանքներում Արցախի երկրամասը ունեցել է երկու անուանում՝ «Փոքր Միւնիք» եւ «Փոքր Հայաստան»:

Արցախի «Կարաբաղ» անուանումը՝ պատմական սկզբնաղբիւրներում առաջին անգամ նշուել է տասնընորրորդ դարում, Վրացական «ժամանակագրութիւն» գրուածքում, եւ պարսկական պատմաբան Խամդալլախա Կազվինի կողմից: Այն առաջացել է պարսկական աշխարհագրական անուանակարգութեան հողի վրայ, երկրամասի հարթավայրային մասը լեռնաչին տարածքից տարբերելու-զանազանելու համար՝ հարթավայրային մասը անուանուել՝ «Պագ-ի - Սաֆիդ» (Սպիտակ Այգի), երկրամասի լեռնային մասը անուանուել՝ «Պագ-ի սիախ», որը թրքալեզուի իմաստաւորման հնչիւնափոխութեամբ փոխակերպուել, վերածուել Կարաբաղ-ի (Սեւ - Այգի): Յունա-Հռոմէական եւ Հայկական հեղինակները ճշգրիտ նշել էին՝ առայն, որ Արցախ երկրամասը եւ դրացի Ուտիք գաւառը անցել էին Կուռ գետի աջափնեայ մասով, աշխարհագրականորէն կազմել Հայաստանի տարածքի մաս, որի սահմանը նաեւ Ալբանեայի թագաւորութեան հետ անցել էր Կուռ գետի աջափնեակով: Ահա միայն մի քանի մէջբերումներ դասական հեղինակների ծանուցումներից:

Ստրաբոն. Բուն Հայաստանում բազում լեռներ, բարձրաւանդակներ ... աչնտեղ նաեւ լեռնահովիտներ ... օրինակի համար Արաքսի հարթավայրը, որտեղով մինչեւ Ալբանիայի սահման հոսում է Արաքս գետը:

Այդ նկարագրութիւնը նման է այժմեան Արցախ-Կարաբաղի լեռնային տարածքին:

Պլինի Աւագ. Այդ ցեղը, (Ալբաններ) տարաբնակուած կովկասեան լեռներում, եկել հասել մինչեւ Կուռ գետի աջափնեակի տարածք, Հայաստանի ու Վրաստանի սահմաններ: Ալբանիա, որը Ղարաբաղ են համարում, նրա բնակիչները բնիկ չէին, եկուորներ եղել:

Կլաւդիի Պտղեմէյ. «Մեծ Հայաստան, սահմանակափակուած հիւսիսային մասով՝ Կոլխիդայի, Վրաստանի, Ալբանիայի գծով, անցել կուռ գետով»:

Պլուտարխ. Երբ երկրամասում ձմեռն է վրայ հասել, հոովմէական զօրք այդ հողում (Հայաստանում) հովմէացիները կատարում էին «Սատուրնայի» ին նուիրուած տօնախմբութիւնները, ալբանացիները հաւաքել էին ոչ պակաս քան քառասուն հազար մարդկանց, գետանցել Կուռ գետը, հարձակուել նրանց վրայ, հասել Կուռ գետի աջափնեայ ափեր:

Հետեւաբար ալբանացիները բնակած եղել Կուռ գետի ձախ ափում:

ՎԱՐՉԱ-ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԻ ՊԱՏ-ՄՈՒԹԵԱՆ ՏՈՒԵԱՆՆԵՐ

Արմինա-Ուրարտու-Հայաստան, մ.թ.ա. ութերորդ դարում գահակալած Սարգուրի Երկրորդ թագաւոր, Յոփք գաւառի Տուչպա մայրաքաղաքի պարիսպի վրայ իր ու երկրի յիշատակութեան մեծածաւալ արձանագրութիւն արել, որի պահպանուած մասի տուեալներով ու ռազմական երթով հասել մինչեւ Ուրտէխիսի, հնչիւնափոխուած Արցախ երկրամաս: Մ.թ.ա. վեցերորդ դարի առաջին կէսում Արցախ երկրամասը գտնուել է Հայաստանի Երուսաղեմի թագաւորական տան գահակալած տարածքում, որի իշխանութիւնը ենթակայ եղել հզոր Մարաստան պետութեանը: Մ.թ.ա. 550 թուականից մինչեւ 331 թուականը գտնուել է Պարսկաստանի Աքեմենեանների թագաւորութեան իշխանութեան ենթակայութեանը, այնուհետեւ Պարսկաստանի տարբեր իշխողների տարածքներում, մինչեւ մ.թ. քսաներորդ դարում Ռուսի պատերազմում ամբողջ Անդրկովկասին տիրելը:

Մ.թ.ա. Չորրորդ դարի վերջից սկսած Արցախը, ինչպէս դրացի Միւնիք ու Ուտիք երկրամասերը, շարունակել էին մնալ Հայկական Երուսաղեմի թագաւորութեան տան կազմում (Մովսէս Խորենացիի՝ «Պատմութիւն Հայոց»): Մ.թ.ա. երկրորդ դարից սկսած այդ երկու երկրամասերը եղել էին Հայաստանի Արտաշէսեան Թագաւորութեան տան կազմում, որը ըստ իր խօսքի ինք Երուսաղեմի տոհմից էր սեւել: Այդ երկրամասերի Արտաշէսեան թագաւորութեան տոհմի արքայ Տիգրան Երկրորդ, Մ.թ.ա. 95 թուականից մինչեւ մ.թ.ա. 54 թուական թագաւորութեան կազմում լինելը, այն իրողութիւնը ու վկայութիւնն է, որ Տիգրան Արքան իր երկրորդ Մայրաքաղաք Տիգրանակերտը հիմնադրել էր Երուսաղեմիների Մոփք գաւառում (Սեբեոս պատմիչ): Հայաստանի այդ երկրամասերը «Ուրխիստենու» (Արցախ) անուանել էր նաեւ պատմիչ Ստրաբոն: Այն միահասմուտ վկայում են վաղ միջնադարեան հայկական սկզբնաղբիւրները: Համաձայն «Աշխարհացոյց»-ի (Հայկական աշխարհագրութիւն Եօթերորդ Դար) Արցախը հանդիսացել Հայաստանի տաներկրորդ մարզերից տասներորդը, որոնք եղել են՝ Աբանդ, Վայկունիք, Բերդաձոր, Մեծ Արանք, Մեծ Կեանք, Խարչլանկ, Մուժանք, Պիանք, Պարսկանք, Կուստի, Ֆարնես, Կոյտ: Հայաստանը, 387 թուականին Բիւզանդական կայսրութեան եւ Իրանի թագաւորութեան միջեւ բաժանուելուց էլ Արցախը շարունակել մնալ Հայաստանի կազմում նույնիսկ մինչեւ Հայաստանի Արշակունի թագաւորութեան 428 թուականի անկումը: Յետոյ միացուել էր Պարսկական թագաւորութեան ու Կուռ գետի ձախակղմեան ափի Ալբանական պետութիւնների միջեւ, ինչպէս որ վկայում է «Աշխարհացոյց»-ի հեղինակը տեղեկացրել նաեւ այն մասին, որ ըստ հույներէն Ալբանեան գտնուել է հիւսիսային Կուռ գետի ձախակղմեան կողմ, վարուց ի վեր ծառայել որպէս սահման նրա ու Հայաստանի միջեւ: (Շարունակելի)



## Արձեւն Սարգսեան. Կայ Միայն Սէկ Ճանապարհ

Շարունակուած էջ 6-էն

սեցնում դրանցից: Հայաստանի ու Ռուսաստանի, հայերի ու ռուսների միջեւ յարաբերութիւնները դարերի պատմութիւն ունեն, դրանք այնքան խորն են, որ ոչ ոք չի կարող դա փոխել, վերածեալ փոխել կամ ազդեցութիւն ունենալ դրանց վրայ: Կարծում եմ՝ իրական քաղաքական գործիչները, ովքեր որոշումներ են ընդունում, հիանալի հասկանում են սա: Տուեալ դէպքում ես խօսում եմ Ռուսաստանի Դաշնութեան նախագահ Վլադիմիր Պուտինի մասին:

Խօսում էք 2018 թուականի մասին. Այո, կային հակախախտական ելույթներ, մեծածախ մարդիկ էին հրապարակներում, եղել են նաեւ հակառուսական եւ այլ յայտարարութիւններ: Սակայն այստեղ շատ կարեւոր է այն, որ մեր բոլոր ընկերներն անյանգստանում էին, զանգահարում: Ինձ՝ որպէս երկրի նախագահի, ով քաղաքական առաջնորդ չէ, զանգում էր, օրինակ, Վլադիմիր Պուտինը: Ես նրան բացատրում էի իմ տեսլականը: Զանգահարում էին Նուրսուլթան Նազարբաեւը, Ալեքսանդր Լուկաշենկոն, զանգում էին ողջ աշխարհից, եւ շատ աւելի յաճախ նախկին խորհրդային հանրապետութիւնների բարեկամները: Ամենահետաքրքիրն այն է, որ այն ժամանակ շատ՝ հիմնականում արեւմտեան դիւանագէտներ գարմանում էին, որ Ռուսաստանը չի խառնուում Հայաստանի գործերին: Սա հէնց ռուսական կողմի եւ դեկալարութեան իմաստնութիւնն է, քանի որ նրանք այնքան վստահ են մեր պատմական յարաբերութիւնների խորութեան ու յարատեւութեան վրայ, որ Հայաստանում տեղի ունեցող իրադարձութիւնների պայմաններում էլ վստահ էին, որ հայ ժողովուրդը որոշ ժամանակ անց, անգամ հակառուսական յայտարարութիւններ անողները, կը հասկանան, թէ ինչն է արժէքաւոր: Երբ արեւմտեան այցերի ժամանակ հանդիպում եմ լրագրողներին, քաղաքական գործիչներին ու դիւանագէտներին՝ հետ, յաճախ եմ ասում, որ տեսէ՛ք՝ կայ վստահութիւն Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ, եւ դա այնքան խորն է եւ հիմնարար, որ ոչ մի քաղաքական փոփոխութիւն, յայտարարութիւն չի կարող ազդեցութիւն գործել: Դրա օրինակն այն վստահութիւնն է, որ Ռուսաստանը ցուցաբերեց Հայաստանի նկատմամբ՝ չխառնվելով երկրի ներքին գործերին: Ժամանակը ցոյց տվեց, որ այդ որոշումը բացարձակ ճիշտ էր:

Հարց.- Մենք, ի հարկէ, կը վերադառնանք այս հարցին: Այս երկու կախուածութիւնները Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը լրջօրէն բարձրացնում են միջազգային մակարդակի: Կարող է Ղարաբաղի խնդիրը լուծել նրա միջազգային ճանաչումը: Ձեր արեւմտեան այցերն ինչ արդիւնքներ են ունեցել:

- Այլ երկրների կողմից Լեռնային Ղարաբաղի ճանաչումն այս դէպքում կը լինի միջազգային իրաւունքի, միջազգային պայմանաւորութիւնների ու սկզբունքների, նաեւ փրկարկայութեան շրջանակում, որը զարգացել է տարբեր տարածաշրջաններում, այդ

թւում Արեւմուտքում: Խօսքը ժողովուրդներին՝ սեփական ճակատագիրը որոշելու իրաւունքի մասին է:

Հանդիպել եմ Եւրոպական խորհրդի նախագահի, փոխնախագահի, Ֆրանսիայի նախագահի հետ: Հանդիպում եւ բանակցութիւններ են եղել Նատո-ի գլխաւոր քարտուղարի հետ: Ձեզ չեմ կարող պատմել մանրամասների մասին: Դուք փորձառու լրագրող էք, տեսել էք պաշտօնական հարցազրույթները:

Հարց.- Ես ցանկանում եմ իմանալ, թէ ստացել էք Ձեր գլխաւոր հարցի պատասխանը՝ ինչպէ՞ս է ստացւում, որ Նատո-ի անդամ թուրքիան անում է այն, ինչ ցանկանում է, իսկ Նատո-ն ոչինչ չի անում: Հէնց այս հարցն էր Դուք մամուլում բարձրացրել, երբ գնում էիք: Այնտեղ ստացա՞ք այդ հարցի պատասխանը:

- Իմ հարցի պատասխանը ես ստացել եմ: Կարող եմ նշել, որ բաւարարուած եմ իմ գործողմամբ, ինչպէս նաեւ իմ հանդիպումներից նախագահ Մակրոնի, Նատո-ի գլխաւոր քարտուղարի, Եւրոպական խորհրդի ներկայացուցիչների հետ: Ես ստացել եմ իմ հարցերի պատասխանները:

Լուծե՞լ են արդեօք այդ պատասխանները դարաբաղեան հարցը՝ ոչ: Կարող եմ կիսուել Ձեզ հետ այդ հանդիպումների մանրամասներով: Բնականաբար, ցաւօք, չեմ կարող. եւ ինչ կար մամուլի համար, արդէն իսկ մամուլում է:

Հարց.- Այցի արդիւնքներով կարող էք ասել, թէ ինչու է թուրքիան իրեն այսպէս ակտիւ պահում այս հակամարտութիւնում՝ փաստայի բացէրեք կամ գնելով Բաքուի եւ Ատրայեյցանի դեկալարութեան կողքին:

- Գիտէ՞ք, Ձեր հարցին պատասխանելու համար ինձ անհրաժեշտ չէր կատարել այդ այցը, այլ հակառակը, այդ այցի ընթացքում ես բացատրում էի Եւրոպայի գործընկերներին, թէ ինչու է թուրքիան իրեն այդ կերպ պահում: Այսինքն՝ ես այդ այցը չեմ կատարել, որպէսզի հասկանամ: Ես դիտեմ՝ ինչու:

Եկէ՛ք միասին վերլուծենք: Նախ, հասկանանք պաշտօնական պատճառը, որը թուրքիան յայտնում է, թէ ինչու է ներգրաւուել այս հակամարտութեան մէջ: Առաջին հերթին, նրանք յայտարարեցին, թէ ատրայեյցանցիներն իրենց էթնիկ եղբայրներն են: Գիտէ՞ք ինչ, էթնիկ եղբայրներ Ռուսաստանը նույնպէս ունի՝ ամբողջ Եւրոպայի սլաւոնները: Թուրքիայի էթնիկ եղբայրներն Ատրայեյցանից հասնում են մինչեւ Կենտրոնական Ասիա, Մոնղոլիայ, Չինաստան, Ռուսաստանի Դաշնութիւն: Դա նշանակու՞մ է, որ նա ապագայում իրեն նույն կերպ պէտք է պահի, եթէ մտածի, որ իր էթնիկ եղբայրներին ինչ-որ բան է սպառնում:

Երկրորդ պատճառն ամբողջութեամբ անհետեւութիւն է: Հին խաղաքարտեր օգտագործելով ասում են, թէ իբր Ղարաբաղի տարածքում կան քրդական որոշակի կազմակերպութիւնների գիւնեակներ: Սա բացարձակ անհետեւութիւն է: Եթէ գոնէ մէկին գտնէք, ցոյց տուէ՛ք: Սակայն, միւս կողմից նույն թուրքիան Ատրայեյցան է բերել յայտնի կազմակերպութիւնների ահաբեկիչներին, որոնց անունները յայտնի են բոլորին:

Այդ անունները յայտարարուել են նաեւ շատ երկրների համապատասխան ներկայացուցիչներին՝ ներառեալ ռուսական բարձրաստիճան պաշտօնյեաններին, դիւանագէտներին եւ նախարարների կողմից: Նրանք նույն ահաբեկիչներն են, որոնք ակտիւորէին աշխատել եւ վարժեցուել են Սիրիայի տարածքում, յետոյ նրանց մի մասին տեղափոխել են Եգիպտոս, այնուհետեւ՝ Լիբիայ, որտեղից տրանսպորտային միջոցներով տեղափոխել են Ատրայեյցանի տարածք:

Որպէս երրորդ պատճառ ասում է, թէ իբր հայերը քիչ է մնում հարուածեն նաւթատար եւ գազատար խողովակներին, այսինքն՝ ենթակառուցուածքներին, լողափակային: Սա նույնպէս բացարձակ անհետեւութիւն է, որովհետեւ եթէ հայերը մտադիր լինէին հարուածել այդ ենթակառուցուածքների ուղղութեամբ, դա կ'անէին 20 տարի առաջ՝ ցոյց տալով, որ առանց Հայաստանի չի կարելի կառուցել խողովակաշարեր, որ Հայաստանը պէտք է այդ խողովակաշարերի մասը կազմի կամ գոնէ դարաբաղեան հակամարտութիւնը պէտք է լուծուած լինէր նախքան այդ խողովակաշարերի կառուցումը:

Հարց.- Ինչպէս նշեցիք, այդ հաւակնութիւններն անկայունութեան օջախներ են ստեղծում Ռուսաստանի սահմանի մօտ: Միաժամանակ, Ռուսաստանն այսօր շատ զուսպ դիրքորոշում ունի: Սա երեւի չ'ի համընկնում Երեւանի ակցիակալիքների հետ:

- Դուք խօսում էք ինձ հետ, եւ ես կարող եմ կիսուել իմ կարծիքով որպէս երկրի նախագահ: Մենք հասկանում ենք, որ Ռուսաստանը թուրքիայի հետ ունի շատ խորն եւ ընդլայնուած յարաբերութիւններ քաղաքական, տնտեսական, ռազմական ոլորտներում: Սա ընդունում ենք որպէս թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ եղած նորմալ երկկողմ յարաբերութիւններ: Սրանում ես ոչ մի վտանգ չեմ տեսնում, հակառակը, քանի որ Ռուսաստանը այն երկիրն է, որն ի վերջոյ կարող է արմատապէս փոխել եւ կարգաւորել Լեռնային Ղարաբաղում ներկայ ռազմական իրավիճակը՝ կողմերին առաջարկներ, դիւանագիտութեան, ճնշման միջոցներ ներկայացնելով: Կարծում եմ, Ռուսաստանի եւ

թուրքիայի երկկողմ յարաբերութիւնները նորմալ են: Եկէ՛ք բոլորովին այլ օրինակ բերեմ: Տարիներ առաջ, երբ ազատ մարդ էի, ինձ հարցնում էին, թէ ինչ եմ մտածում այն մասին, որ թուրքիան ցանկանում է ԵՄ անդամ դառնալ: Ես ասում էի, որ սկզբունքորէն դա լաւ գաղափար է, որովհետեւ մենք կ'ունենանք հարեւան, որը կը կառավարուի շատ ավելի քաղաքակիրթ օրէնքներով եւ վարքագծով: Այսինքն, կունենայ Եւրոպայի համար շատ կարեւոր մի բան՝ հանդուրժողականութիւն:

Ռուս-թուրքական յարաբերութիւնները եւ Ռուսաստանի ազդեցութիւնը թուրքիայի վրայ կարող են շատ դրական դեր ունենալ Ղարաբաղում այս ռազմական իրավիճակի լուծման համար, ուստի ասել, թէ ես ինչ-որ առումով անհանգիստ եմ, որ գործընթացներ են տեղի ունենում, այդպէս չէ: Ես դրան նորմալ եմ վերաբերում՝ որպէս նորմալ երկկողմ յարաբերութիւններ Ռուսաստանի եւ թուրքիայի միջեւ:

Հարց.- Ինչ է կարծում, եկե՛լ է ժամանակը, որ Ռուսաստանը Հայաստանին ռազմական աջակցութիւն տրամադրի այս իրավիճակում: Ձեր կարծիքով, Ռուսաստանն ունի դա անելու օրինական հնարաւորութիւն:

- Ես խորհրդարանական հանրապետութեան նախագահ եմ, երկրի գլուխը: Բաց եկէ՛ք կրկին Ձեզ պատասխանեմ որպէս դիւանագետ: Հայաստանի եւ Ռուսաստանի Դաշնութեան միջեւ ռազմական աջակցութեան մասին հարցը կարգաւորուած է մեր պայմանագրերով: Այդ պայմանագիրը դրուած է սեղանին, եւ յստակ պատասխան է եղել Ռուսաստանի արտաքին գործերի նախարարութեան կողմից: Եթէ պայմանագրի պայմաններն ակնյայտ լինեն, համոզուած եմ, որ Ռուսաստանի Դաշնութիւնը եւ նրա դեկալարութիւնը՝ որպէս պատասխանատու քաղաքական գործիչներ, կը կատարեն իրենց պարտականութիւնները:

Սակայն, կա՞ն նախադրեալներ, այսօրվայ իրավիճակը համապատասխանու՞մ է, որ այդ պայմանագիրը պէտք է սկսի գործել: Այս հարցը թողնում եմ Հայաստանի եւ Ռուսաստանի կառավարութիւններին:

## Խօսք, Միտում եւ Ընկալում

Շարունակուած էջ 7-էն

ունինք աւելին ընելու եւ պէտք է ընենք: Պէտք է ազգովին զիտակցինք, որ գոյութեանական պայքարի մէջ ենք եւ ամէն ջանք պէտք է գործադրենք յաղթական դուրս գալու: Այս պահի դրութեամբ այնպէս կ'երեւի, որ պատերազմը ի նպաստ մեզի չ'ընթանար, բայց

տարածաշրջանի վիճակը այնպիսին է, որ օրէ օր մեծ փոփոխութիւններու կրնայ ենթարկուիլ: Հետեւաբար այս կացութիւնը պէտք է աւելիով լիցքաւորէ մեզ, ամէն միջոցով շրջելու իրավիճակը ի նպաստ մեզի եւ հասնելու յաղթանակի: Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչման ապահովումը պիտի ըլլայ մեր յաղթանակը:

## Սփիւռքահայութեան Գնահատելի

Շարունակուած էջ 8-էն

մեծցուցած են այս երիտասարդուհին: Այդ պահուն յիշեցինք անմահ Ուլիլիմ Սարոյանին խօսքը. «Աշխարհի որեւէ ցամաքի կամ անկիւնին մէջ, երբ երկու հայեր իրարու քով գան հոն Հայաստան կ'ըլլայ»: Այո, այսօր աշխարհի բոլոր հայերը Հայաստան եւ Արցախ մէկ

մասնիկ եղած են: Անոնք 1915 Մեծ Եղեռնը տեսած եւ վերապրած եւ իր փայլուն ճակատագիր կերտող ժողովուրդի գաւազները եւ թուրքիներն են, որ այս օրերուն անարդար պատերազմին ալ բոլորը միացած միաբերան կ'ըսեն թշնամիին՝ «ՅԱՂԹԵՆՈՒ ՆԵՔ»:

Փառք եւ հազար պատիւ մեր ժողովուրդին, որ նման հերոսածին գաւազներու ծնունդ տուած է եւ կը շարունակէ տալ:



### Մահ Սամուէլ Իլանճեանի

Խոր ցաւով իմացանք գաղութիս գեղարուեստասէր հասարակութեան ծանօթ անձնաւորութիւններէն Սամուէլ Իլանճեանի մահը որ պատահեցաւ Հոկտեմբեր 30, 2020ին, Լոս Անճելոսի մէջ: Թաղման արարողութիւնը պիտի կատարուի Չորեքշաբթի, Նոյեմբեր 4, 2020ին:



Սամուէլ Իլանճեան պատուոյ անդամ էր Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան: Ան Լիբանանի մէջ Պալատի Բիւրօի Միջազգային փառատօնի Հայկական Երեկոյի անմոռանալի եզակի ձեռնարկին կազմակերպիչն էր: Ինչպէս նաեւ Լիբանանի Հ.Բ.Լ.Մ.ի Լիբանանի Վարձաձեռք թատերախումբի հիմնադիրն ու ատենապետն էր եւ Հայ Երիտասարդաց Միութեան Երգի ու Պարի խումբի ատենապետն էր եւ երկար տարիներ Լոս Անճելոսի Արտաւարդ այժմ Սաթամեան թատերախումբի ատենապետը:

Մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք այրիին՝ երգչուհի Ժանէթ Գուլումճեան-Իլանճեանին, զաւակներուն, հարազատներուն եւ ընկերներուն:

**Հ.Բ.Լ.Մ.ի Գրիգոր Սաթամեան թատերախումբի Միութիւն**

### Ցաւակցական

Խոր ցաւով վերահասու եղանք գաղութիս գեղարուեստասէր հասարակութեան ծանօթ անձնաւորութիւններէն եւ Հայ մշակույթի վաստակաշատ նուիրեալներէն Սամուէլ Իլանճեանի մահուան: Հանգուցեալը տասնեակ տարիներ ձեռնհասօրէն վարած է Հ.Բ.Լ.Մ.ի Լիբանանի շրջանի մշակութային բաժանմունքը: Իր օրով իրականացուած են բազմաթիւ եւ բազմաբնոյթ ու բարձր մակարդակի գեղարուեստական ծրագիրներ: Անոնցմէ կարեւորագոյններէն էր Պալատի Միջազգային փառատօնի Հայկական Երեկոյի անմոռանալի եզակի ձեռնարկը:

Ս. Իլանճեան ընտանեօք ԱՄՆ հաստատուելէն ետք շարունակեց իր մշակութաբանութիւնը գործունէութիւնը: Ան փաստօրէն Հ.Բ.Լ.Մ.ի հովանաւորութեան ներքեւ գործող Սաթամեան թատերախումբի վարչութեան ատենապետի պաշտօնը վարելով մեծապէս արդարացուց այդ պաշտօնը: Արդարեւ, թատերախումբը շատ բան կը պարտի Սամուէլ Իլանճեանի օգտաշատ ներդրումներուն:

Այս տխուր առիթով մեր խորագգաց ցաւակցութիւնները հանգուցեալի վշտահար այրիին՝ երգչուհի Ժանէթ Գուլումճեան-Իլանճեանին, զաւակներուն, Հ.Բ.Լ.Մ.ի Սաթամեան թատերախումբին եւ համայն մերձակներուն:

### Բառերու Խորհրդաւոր Աշխարհը

Շարունակուած էջ 14-էն

ներկան գոհում են ապագայի համար», «Ձոհը հատուցում է պահանջում», «Սիրում եմ կեանքը եւ յանուն այդ սիրոյ պիտի շարունակեմ գոհել ամէն ինչ»:

«Ձոհ» բառի ոգին, 19րդ դարու երկրորդ կէսին սկսաւ հայկական գրատպարաններու մէջ սաւառնիլ ու մարմնանալ որպէս գիրքի խորագիր, ինչպէս՝ «Խաղաղութիւնը քնաշրջիկը կամ սիրոյ գոհը, Պոլիս, 1873», «Մանուկ գոհեր կամ կորսուած տաղանդներ», Կ. Պոլիս, 1880, «Ձրկանքի գոհ», Երեւան, 1886, «Վարվառէ կամ XIX-րդ դարու գոհը: Կարնոյ հին գիւղական կեանքից», Թիֆլիզ, 1887, «Վռամ եւ Մարի կամ սրտի գոհեր», Չմիւռնիա, 1894, Հայրենիքի գոհեր. Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքին», Վառնա, 1900, «Սիրոյ գոհեր», Պաքու, 1904, «Վամպիրների գոհը», Պաքու, 1904, «Անմեղ գոհեր», Պաքու, 1908, «Եփրատին գոհերը», Կ. Պոլիս, 1908, «Եղեռնին գոհը. Պատկեր իրական կեանքէ 1913-1914», Կ. Պոլիս, 1914, «Վերջին գոհը», Շուշի, 1915, «Հայ բժկութեան տուած գոհերը», Կ. Պոլիս, 1919, «Հայաստանի կաղանդէքը. Մեծ եղեռնին գոհերը իրենց պատկերներով», Կ. Պոլիս, 1919: Իսկ 90ական թրուականներուն լոյս տեսան արցախանուէր յուշամատեններու բազմահատոր շարք մը՝ «Յուշա-

մատեն- Արցախի համար գոհուած Վարանդացիները / Ուսուցիչները / Դիպակցիները / Կապանցիները / Ջերմուկցիները...»:

Վերջապէս եկան մեր բանաստեղծները, որպէս եղբերգու, իրենց քնարական շունչը գոհաբերեցին այդ միավանկի համար: Նախ Դանիէլ Վարուժանը երգեց. «Թող ես շիրիմդ համբուրեմ, քանզի այս մեր կեանք - գոհին բազինն է»: Յիշել կ'արժէ Վարուժանի «Առաջին մեղքը» քերթուածը, ուր կան «գոհ» բառի ամենէն մեղաւոր տողերը. «Աղբիւրին քով ուր ինձի գոհ ըրէ... ձերմակ աղջիկ, ճերմակ ուր ինձ գոհ ըրէ... Երբ շուրթիդ գայն հեշտանքով մը գոհեց... ձերմակ աղջիկն իր ճերմակ ուր գոհ էց»: Խորիմեան Հայրիկը ակնատես եղաւ, թէ ինչպէ՛ս Վան քաղաքը գոհուեցաւ, գրեց «Վանագոյժ» գիրքը. «Վերանորոգ սահմանադրութեան տօնականին անշուշտ գոհ մի պէտք էր, եւ այն փառաւոր գոհ դու մատուցիր, ժողովուրդ Հայոց»: Սիւսանթան, որ հայկական բանաստեղծութեան ընթացքում ձայն էր, ըսաւ. «Գիտես որ ամէն հերոս մեր վրէժին համար է որ կը ծնի, / Եւ ամէն ազնուագարմ գոհ մեր սիրոյն համար կ'ոգեվարի»: Ռուբէն Սեւակը «Կիլիկիոյ արիւնին» ենթախորագրեալ ողբի մէջ ըսաւ. «Դուն, ո՛վ դժբախտ երկիր հայրենի... / Ձոհ՝ գազաններու խաղին վայրենի»: Միքայէլ Նալպանդեանը գրեց

### Յանուն Սիրոյ, Խաղաղութան

Շարունակուած էջ 14-էն

պարհը Մարիամն էր անցնում եւ շատ վտանգաւոր էր: Նրանց համար յատկապէս վախենալի ճանապարհ էր:

Շատ պատասխանատու, շատ պարտաւորեցնող էր երկու կողմի համար՝ թէ՛ իմ ու Մարիամի, թէ՛ մեզ ուղեկցող տղաների համար: Ստացուեց այնպէս, որ մեր պակասը թիւնը լայն արձագանգ ստացաւ միջազգային հանրութեան շրջանում: Այն ուղղակի հարսանիք էր, այն կոչ էր, որ մենք կեանք ենք ուզում, մենք սէր ենք ուզում: Չենք ուզում, որ 18 տարեկանը սովորի գէնքին, սովորի արեանը, սովորի ապրել ընտանիքից հեռու: Ամէն ինչին յարմարուել կարելի է՝ անգամ ընտանիքը հեռու պայթիւնների եւ կրակոցների տակ ապրելուն: Նոյն դժուարութիւնը նաեւ թիկունքում են կրում, երբ ժամերով, օրերով, նոյնիսկ մէկ ամիս մարդիկ տեղեկութիւն չունեն իրենց հարազատներից: Այդ գագաթնակներն ու զգացողութիւնները շատ ծանր են:

Մեր հարսանիքով ցանկացանք տեղ հասցնել կարեւորը, որ ամէն ինչ յաղթահարելի է եւ պէտք է կամք դրսեւորել, ուժ հաւաքել եւ գործի անցնել: Ես վաղն արդէն վերադառնալու եմ առաջնագիծ՝ տղաների մօտ, վստահ եմ՝ նրանց մօտ էլ տրամադրութեան փոփոխութիւն կը լինի: Նրանք կը սկսեն այլ կերպ նայել կեանքին, նրանք էլ կը ցանկան ինչ-որ մի ձեւով ներդրում ունենալ խաղաղութեան արագ հաստատման հարցում: Պարտադիր չէ, որ այն լինի մարտական ինչ-որ սխրանք: Ամէն մէկը պէտք է իր հնարաւորութիւնների սահմանում իր պայքարը տանի: Ամէն ինչ լաւ է լինելու: Հաւատում եմ, որ շուտով կը վերադառնանք Արցախ-այն արդէն չի լինի ռազմաճակատ, այլ կը լինի սիրոյ, խաղաղութեան, կեանքի, մշակույթի, նուիրումի երկիր, ոչ թէ տարածք: Արցախում պիտի ծնուեն իմ ու Մարիամի երեքից աւել երախաները, որոնց հետ խաղաղ ու երջանիկ ապագայ ենք ստեղծելու:

նոր «Հայր մեր» մը ու աղաչեց. «Ո՛վ Հայր, ո՛վ դու Հայր, որ երկնքումն ես, / Խնայիր թշուառ մեր անտէր ազգին. / Մի՛ տար զոհ գնալ թշնամիների»: Եղիշէ Չարենցը երկտողի մը մէջ ամփոփեց հայոց պատմութիւնը. «Աշնան քաղած արտի նման՝ հազար գոհերի / Չհաւաքած բե՛րք ես տեսել - էլի՛ կը տեսնես»: Յարգելի ընթերցող Չարենցը գիտէր, թէ իրեն նախորդած բանաստեղծները գոհեր էին դարձած, ինքը ուզեց ըլլալ՝ վերջինը. «Թող ո՛չ մի գոհ չպահանջուի ինձից բացի»: Իսկ Շիրազը հասկցաւ, թէ Սատուճոյ կողմէ դատապարտուած էր. «Ես ծնուել եմ ձորերում՝ / Եղեռնի սեւ օրերում: / Աչքս բացի՛ սով տեսայ, / Աստուած ասաց՝ «Ձոհ է սա»:

Վերջապէս եկաւ մէկ բանաստեղծ, պարզ բացատրեց, թէ ինչու է պէտք՝ գոհ: Համօ Սահեանն էր ան, բանաստեղծներու ամենէն պարզը. «Ես ուրիշ տեսակ գոհ եմ, ես իմ գոհն եմ՝ աներեւոյթ շղթաների մէջ: Բանաստեղծը եւ թագաւորը գոհ պիտի լինեն: Թագաւորը գոհ եղաւ՝ երկիր կ'ունենայ, գոհ չեղաւ՝ աթոռ: Բանաստեղծը գոհ եղաւ, երկիր կ'ունենայ, ժողովուրդը կ'ունենայ, գոհ չեղաւ՝ ինքն էլ չի

լինի»: Նոյն Սահեանն էր, որ Հայաստանը տեսաւ որպէս գոհ. «Ձորերդ շնչում են հայերէն, / Ձոհերդ ննջում են հայերէն, / Հայերէն են տանջում ցաւերդ»: Ապա ան գրի առաւ աշխարհի անիրաւութիւններու դէմ իր անգործութեան բանաստեղծութիւնը. «Անում են ու ետ չեն տալիս, / Ես գոհ եմ, իրենք են դժգոհ: / Մեռնում եմ, երբ ուշ են գալիս, / Ես գոհ եմ, իրենք են դժգոհ»:

Այսօր, յարգելի ընթերցող, յօրուածս աւարտած ժամերուն երբ հայ ազգը գոհեր կը շարունակէ տալ, յարմար կը տեսնեմ Ալեքսանդր Դումաշեանի հանդիսաւոր եւ վեհաշուք «Ձոհուածները» բանաստեղծութեան ընտիր տողերով հրաժեշտ տալ ձեզի.

Կեանք չեն ուզում արդէն գոհուածները մեզից,  
Փառք չեն ուզում, նրանք սիրոյ յանուն մեռան...  
Ձոհուածները մեզից հաց չեն ուզում ու կեանք,  
Ձուր չեն ուզում ու կեանք ու ձօներգեր թերի.  
Սեւ ձիերը թամբած - սպասում են նրանք,  
Որ երբ օրհասը գայ՝ իրենք գոհուեն չիլի:

## ՄԱՍԻՍ

### ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

#### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel: ----- Email: -----



### «Ռոման» Յաղթեց, Միսիթարեանը Կատարեց Կոլային Փոխանցում

Իտալիոյ առաջնութեան 6-րդ հանգրուանին «Ռոման» իր դաշտին վրայ մրցեցաւ «Ֆիորենթինայի» հետ: Փորտուկալացի Պաուլու Ֆոնսեկայի գլխաւորած խումբը առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով:



Խաղի հաշիւը 12-րդ վայրկեանին բացաւ իտալացի պաշտպան Լեոնարդօ Սպինացոլան: 70-րդ վայրկեանին դաշտի տէրերու առաւելութիւնը կրկնապատկեց սպանացի յարձակող Փետրօ Ռոտրիկեսը: Կոլային փոխանցումը կատարեց Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Միսիթարեանը, որ մասնակցեցաւ ամբողջ խաղին:

«Ռոման» 11 կէտով հաւասարեցաւ «Նափոլիին» ու «Ինտըրին» եւ կը գրաւէ 7-րդ դիրքը:

### Իպրահիմովիչի Կոլը Յաղթանակ Բերաւ Առաջատար «Միլանին»



Իտալիոյ առաջնութեան 6-րդ հանգրուանին առաջատար «Միլանը» հիւրընկալուեցաւ «Ուտինեզէին» եւ առաւելութեան հասաւ 2:1 արդիւնքով: Յաղթական կոլը 83-րդ վայրկեանին նշանակեց 39-ամեան շուէտ յարձակող Զլատան Իպրահիմովիչը:

«Միլանը» 16 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ երկրորդ տեղին մէջ ընթացող «Աթալանթայի» նկատմամբ ունի 4 կէտով առաւելութիւն:

### «Եուվենտուսի» Յաղթանակն ու Ռոմալտուի Կոլերը

Իտալիոյ առաջնութեան 6-րդ հանգրուանին ախոյեան Թուրինի «Եուվենտուսը» հիւրընկալուեցաւ «Սպեցիալէն» եւ առաւելութեան հասաւ 4:1 արդիւնքով:

Երկու կոլերու հեղինակ դարձաւ կորոնավիրուսէն ապաքինուած փորձուկալացի յարձակող Կրիշտիանու Ռոմալտուն, որը «Եուվենտուսի» պահեստայիններու շարքին էր եւ փոխարինման դուրս եկաւ 56-րդ վայրկեանին:

«Եուվենտուսը» 12 կէտով երկրորդ տեղը կը գրաւէ եւ առաջատար «Միլանէն» ետ է 4 կէտով:

### «Մանչեսթեր Եունայթըտ» - «Արսենալ»՝ 0:1



Անգլիոյ առաջնութեան 7-րդ հանգրուանին Լոնտոնի «Արսենալը» հիւրընկալուեցաւ «Մանչեսթեր Եունայթըտին» եւ առաւելութեան հասաւ նուազագոյն հաշուով:

Սպանացի Միկել Արտետայի գլխաւորած խումբին յաղթանակ բերաւ ճաբոնցի յարձակող Պլեր-Էմերիկ Օպամեանկի կոլը 11 մեթրանոցէն:

«Արսենալ» (7 խաղ) 12 միւսկորով 8-րդ տեղը կը գրաւէ, «Մանչեսթեր Եունայթըտ» (6 խաղ) 15-րդն է՝ 7 միւսկորով:

### ՀՖՖ-ն ԿԸ Պահանջէ Ատրպէյճանական «Ղարաբաղ» Ակումբը Հեռացնել Եւրոպական Գաւաթներու Խաղարկութիւնէն

Վերջին ամսուան ընթացքին Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիան բազմաթիւ բողոքներ ներկայացուցած է ՌԻԵՖԱ եւ ՖԻՖԱ՝ ատրպէյճանական ֆուտպոլի ամենատարբեր ներկայացուցիչներու ռազմատենչ հրապարակումներու, հայատեաց գրառումներու վերաբերեալ: Այդ բողոքներու մեծ մասը այս պահուսն ՌԻԵՖԱ-ի կարգապահական եւ էթիկայի կոմիտէի քննութեան առարկայ է, կը յայտնէ ՀՖՖ մամուլի ծառայութիւնը:

**"We must kill all Armenians - women, children, the elderly. We need to kill them without distinction. No regrets. No compassion."**  
-Nurlan Ibrahimov



Ատրպէյճանական ֆուտպոլի ներկայացուցիչներու ռազմականացումը եւ քաղաքականացումը դատապարտելի կեցուածքն ցոյց կը դրուի շուրջ մէկ ամիս, սակայն այն, ինչ այսօր տարածուեցաւ համացանցի մէջ, զարհուրելի է եւ կ'ոտնահարէ քաղաքակրթական եւ բարոյական բոլոր չափանիշները:

Հարաբաղ» ֆուտպոլային ակումբի մամուլի եւ հասարակայնութեան հետ կապերու բաժնի ներկայացուցիչ Նուրլան Իբրահիմովը սոցցանցերէն մէկի իր պաշտօնական էջին մէջ կատարած էր գրառում, որտեղ բառացիօրէն կոչ կ'ընէր սպանել բոլոր հայերուն՝ ծերերուն, կանանց, երեխաներուն՝ առանց տարբերակման:

«Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիան համապատասխան բողոք յղած է ՌԻԵՖԱ՝ պահանջելով խստագոյն պատժել ինչպէս վերոնշեալ աշխատակցին, այնպէս ալ ատրպէյճանական ակումբին՝ ընդհուպ մինչեւ եւրագաւաթներէն հեռացումը: Ատելութեան իօսքը, բռնութեան կոչերը, աչքստեսցուցիչները պէտք է արմատախիլ ըլլան ֆուտպոլին՝ հաւատարիմ մնալով եւրոպական ֆուտպոլային ընտանիքէն ներս ընդունուած արժէքներուն», - ըստած է ՀՖՖ յայտարարութեան մէջ:

### NBA-ի Թուրք Պասքեթպոլիստ. Էրդողանն Է Ահաբեկչութեան Նոր Դէմքը

Պասքեթպոլի ազգային ասոցիացիայի «Պոսթոն Սելթիքս» ակումբի թուրք խաղցող Էնես Կանտերը քննադատած է Թուրքիոյ նախագահ Էրտողանին:



«Ահաբեկչութիւնն ունի նոր դէմք: 10 տարուան մէջ 31 հակամարտութիւն 10 երկրներու (Յունաստան, Ռուսաստան, Կիպրոս, Սիրիա, Արժան, Իրաք, Հայաստան, Ֆրանսա, Սաուդեան Արաբիա, քրդեր) հետ:

Աշխարհը պէտք է հասկանայ, որ էրտողանի ռեժիմն է այդ հակամարտութիւններու հեղինակը, Թուրքիան չէ: Եկէք կանգնեցնենք այս բռնակալութիւնը եւ կառուցենք խաղաղ աշխարհ», - ընկերային ցանցերու վրայ գրած է Կանտերը:

Թուրքիոյ մէջ Կանտերի հօրը 2018 թուականին դատապարտած են 15 տարուայ բանտարկութեան: Որդին հօր ազատագրութեան կը կապէ Թուրքիոյ պետութեան եւ էրտողանի հասցէին սուր քննադատութեան հետ:

Էնես Կանտերը գրկուած է Թուրքիոյ քաղաքացիութենէն եւ շուտով կը ստանայ ԱՄՆ-ի անձնագիրը:

### «Մանչեսթեր Սիթին» Յաղթանակ Տարաւ

Անգլիոյ առաջնութեան 7-րդ հանգրուանի փոխախոյեան «Մանչեսթեր Սիթին» հիւրընկալուած էր «Շեֆիլտին»:

Կատալոնացի Խոսեպ Կուարտիլայի գլխաւորած խումբը յաղթանակ տարաւ նուազագոյն՝ 1:0 հաշուով: Մանչեսթերեան ակումբի միակ կոլը 27-րդ վայրկեանին նշանակեց անգլիացի պաշտպան Քայլ Ուոլքերը:

Այժմ «Մանչեսթեր Սիթին» 11 կէտով 7-րդն է մրցաշարային աղիւսակին վրայ, իսկ «Շեֆիլտը» 1 միւսկորով նախավերջին տեղը կը գրաւէ:

### Քեյնի եւ Պեյլի Կոլերը Յաղթանակ Ապահովեցին «Թոթեմհեմին»

Անգլիոյ առաջնութեան 7-րդ հանգրուանին Լոնտոնեան «Թոթեմհեմը» իր դաշտին վրայ 2:1 արդիւնքով պարտութեան մատնեց «Պրայթերին»:

Փորտուկալացի Ժոզէ Մուրերինիոյի գլխաւորած խումբին յաղթանակ բերին անգլիացի յարձակող Հէրի Քեյնի եւ կալէսցի կիսապաշտպան Կարլոս Պեյլի կոլերը:

Մտորիտի «Ռէյլին» վերադառնալէն ետք, Պեյլը առաջին կոլը նշանակեց անգլիական ակումբի կազմէն ներս: